



**ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ**

**ՇՐՋԱԿԱ ՍԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ**



ՀԳՇՆ ՄՊԸ Տնօրեն՝

Վ. Հովսափյան

Բնապահպանության մասնագետ՝

Ք.Սահակյան

Երևան

Հունիս, 2021

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու Թ Յ Ու Ն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 5

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 6

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ..... 7

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ..... 11

4.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր..... 11

4.1.1. Առկա իրավիճակի նկարագրություն..... 11

4.1.2. Նախատեսվող ենթակառուցվածքների իրականացման համառոտ նկարագիր..... 11

5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՆՏԵՆՍԻՎԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ..... 14

5.1. Ինտերնետային կապ և տվյալների կենտրոն (տեղեկատվության, մոնիտորինգի և կառավարման կենտրոն)..... 14

5.2. Էլեկտրաէներգիայի մատակարարում և արտաքին լուսավորություն..... 15

5.3. Գազամատակարարում..... 16

5.4. Աղբահանության կազմակերպում..... 16

5.5. Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր..... 18

5.5.1. Ջրամատակարարում..... 18

5.5.2. Ջրահեռացում..... 19

5.5.3. Անձրանջրերի հեռացում..... 20

5.5.4. Ոռոգման համակարգ..... 20

5.6. Տեսահսկողություն և հակահրդեհային անվտանգություն..... 23

5.7. Փակ ավտոկայանատղի..... 26

5.8. Փողոցներ, մայթեր և հեծանվուղիներ..... 27

5.9. Հենապատեր..... 27

6. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ..... 28

6.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր..... 28

6.2. Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ..... 30

6.3. Հողային աշխատանքներ, օգտագործվող բնառետուրսներ..... 31

4.2.1. Աշխատանքների իրականացման անվտանգության տեխնիկա..... 33

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ..... 37

5.1 Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները..... 37

5.2 Տարածքի սեյսմիկ բնութագիրը..... 40

5.3 Օդային ավազան..... 40

5.4 Բուսական և կենդանական աշխարհ..... 40

5.5 Ջրային ռեսուրսներ..... 41

5.6 Հողօգտագործում..... 42

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 43

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ..... 45

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ և ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ..... 46

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 47

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ.....48

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ49

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ50

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....51

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԻՆՇԵՆԵՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ.....52

 5.1. Ինժեներական ենթակառուցվածքների համակցված հետազիծը և ելքերի հանգույցների սխեման54

 5.2. Փողոցների և մայրերի գլխավոր հատակագիծ55

 5.3. Տրանսպորտի շարժման և ճանապարհների կահավորման սխեմա56

 5.4. Ճանապարհների հիմնանիշերը և հենապատերի դասավորվածությունը57

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱ58

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱ58

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ).....60

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ71

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՁԵՎ74

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ75

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ.....76

ԸՆԴՀԱՆՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	Ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների նախագծում
Ծրագրի պատվիրատու	ՀՀ վարչապետի աշխատակազմ և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
Ձեռնարկող	ՀԳՇՆ ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	ք. Երևան, Կիևյան 16
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Հեռ.՝ (+374 10) 274 307 (քաղ.) E-mail: hgsnvh@gmail.com
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջան, Բազրեվանդի փողոց հ.74 հողամաս
Կառուցապատման ենթակա հողամասի մակերեսը	3 հա
Նախագծով նախատեսված աշխատանքները	Ինժեներական ենթակառուցվածքների իրականացում

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինժեներական քաղաքը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ իրականացվող «Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածքներ» ծրագրի շրջանակում ֆինանսավորվող նախագծերից է, որը բաղկացած է լինելու 22 ինժեներական ընկերությունների շինություններից, լաբորատորիայից, ավտոկայանատեղիից և ինժեներական տարբեր ենթակառուցվածքներից:

Ինժեներական քաղաքը տեղակայված է լինելու Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Բագրևվանդի փողոց 74 հասցեում տեղակայված հողամասի սահմաններում (տես՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշումը <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=144660>), որի ճարտարապետական նախագիծը (Էսքիզային գլխավոր հատակագիծ և ճարտարապետական լուծումներ, բարեկարգում, կանաչապատում և այլն) մշակվել է «Ստորակետ» ճարտարապետական ստուդիայի կողմից:

Ինժեներական քաղաքը նախատեսվում է որպես ինժեներական ռեսուրս կենտրոն՝ օժանդակելու գործող ինժեներական կազմակերպություններին մեծացնելու արտադրության ծավալները, ինչպես նաև ստեղծելու բարձր տեխնոլոգիաների ոլորտում նոր կազմակերպություններ: Այն նախատեսվում է վերածել ինժեներական մտքի ու նորարարությունների կենտրոնի:

Սույն հաշվետվությունը մշակված է Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Բագրևվանդի փողոց հ. 74 հողամասում նախատեսվող ինժեներական քաղաքի **միայն ինժեներական ենթակառուցվածքների** համար, որի նախագծի մշակումը իրականացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի, «Ձեռնարկությունների ինկուբատոր» (պատվիրատու) հիմնադրամի և ՀԳՇՆ ՄՊԸ (խորհրդատու) 2019թ. դեկտեմբերի 12-ին կնքված եռակողմ Պայմանագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, Ինժեներական քաղաքի **ինժեներական ենթակառուցվածքների** կառուցման նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, քանի որ տարածքում նախատեսված է կառուցել փակ ավտոկայանատեղի, որի կառուցապատման մակերեսը գերազանցում է 1500 մ²-ը (այն կազմում է 3600մ²), ինչպես նաև 300 մմ տրամագծով և 1 կմ-ից ավելի երկարությամբ (1518մ) հեղեղատար կոյուղի:

Ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է Նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

➤ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

➤ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը

ՇՄԱԳ հաշվետվության մեջ գնահատման ենթակա օբյեկտները և բնութագրերը սահմանված են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13 կետերում:

➤ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ՆԳՀ-ի մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան: Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող ինժեներական ենթակառուցվածքների իրականացման աշխատանքային նախագիծը,
- նախատեսվող գործունեության տարածք դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տարածաշրջանի և գործունեության բուն տարածքի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները,
- ՀՀ օրենսդրության բնապահպանական և օրնսդրական կարգավորիչ շրջանակը
- ազդակիր և շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների ու քննարկումների արդյունքները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,

- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի ներկայացում (ներառյալ՝ հանրային լսումների արձանագրությունն ու մասնակիցների ցանկը) Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, իրավական այլ ակտերից և կառավարության մի շարք որոշումներից:

ՀՀ Սահմանադրության (2015) 12-րդ հոդվածը «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման վերաբերյալ՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

Ստորև ներկայացված են շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ մի շարք օրենքներ և կառավարության որոշումներ.

➤ ՀՀ օրենքներ

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - բաղկացած է ՀՀ-ում տարբեր բնույթի ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընթացի հիմնական քայլերից: Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման «հայեցակարգերի» պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության և շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների, որոնք դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999)
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000)
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների հարցերը:
- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:
- «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002)
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման կամ վնասագերծման կամ պահպանման կամ փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման պայմաններին և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները:
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄՍԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:
- «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք
- «ՀՀ անտառային օրենսգիրք» (2005)
- «ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006)
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)

- «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

➤ **ՀՀ կառավարության որոշումներ**

- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»

Սույն հաշվետվության պատրաստման ընթացքում հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության 25.09.2014թ. «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա, կառավարության 10.12.2015թ. նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 և կառավարության 27.05.2015 նիստի «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր (բերված են ստորև) և կոնվենցիաներ՝ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ (ցանկն առկա է ՀՀ ՇՄՆ <http://www.env.am/> ինտերնետային էջում)։

➤ **Միջազգային համաձայնագրեր.**

- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)
- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (2003թ.վավերացվել է ՀՀ կառավարության կողմից)
- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել):

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 «Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ: Շինարարական նորմերը հաստատելու մասին» N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

4.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր

4.1.1. Առկա իրավիճակի նկարագրություն

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևանի քաղաքի Նոր Նորքի վարչական շրջանի Բագրևանդի 74 հասցեում և իրենից ներկայացնում է չկառուցապատված տարածք:

Տարածքը տեղակայված է Բագրևանդ փողոցի կենտրոնական մասերում, որն ազատ է կառույցներից: Այստեղ նախատեսվում է ապագայում իրականացնել ինժեներական քաղաքի կառուցում՝ բազմաթիվ կառույցներով և շինություններով: Ուսումնասիրվող բուն տարածքում կան թափված բազալտի և բետոնի բեկորներ, իսկ տեղ-տեղ նաև շինարարական աղբ: Տարածքի մի մասն իր բնական ռելիեֆով, հանդիսանում է բավական հարթ խոտածածկ տարածք: Տարածքի արևելյան կողմով անցնում է Բագրևանդ փողոցը, հարավային՝ Ն.Ստեփանյանի փողոցը, հյուսիսային՝ բնակելի բարձրահարկ շենքեր, իսկ արևմտյան՝ տարբեր կառույցներ:

Ինժեներական քաղաքի համար նախատեսված այս տարածքն ապահովված է կադաստրային փաստաթղթերով, որի ընդհանուր հողատարածքի մակերեսը կազմում է 3 հա (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը բերված է [հավելված 1](#)-ում):

Տարածքի իրադրության սխեման բերված է [հավելված 2](#)-ում:

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի պատվերով, Ինժեներական քաղաքի ողջ տարածքը հետազոտվել է «Գեոլիթ» ՍՊԸ-ի կողմից, որից բացի ինժեներական ենթակառուցվածքների անցկացման կոնկրետ տեղամասերում մանրամասն ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ է կատարվել նաև ՀԳՇՆ ՍՊԸ-ի կողմից:

Ինժեներական քաղաքի համար նախատեսված ողջ հողատարածքն ազատ է կիսակառույցներից և այլ կոշտ թափոններից (քարաբեկորներ, հիմնահողեր և այլն), և ամբողջ տարածքը համահարթեցված է:

4.1.2. Նախատեսվող ենթակառուցվածքների իրականացման համառոտ նկարագիր

Ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներն իրականացվել են Պատվիրատուի կողմից տրամադրված նախագծման ճարտարապետակատակագծային առաջադրանքին (Երևանի քաղաքապետարանի կողմից 2021թ. հունվարի 25-ին տրված N 01/18-07/1-Խ-3954-13 ճարտարապետահատակագծային առաջադրանք), տեխնիկական առաջադրանքին, տեխնիկական պայմաններին և ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների պահանջներին համապատասխան:

Ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների նախագծի մշակման համար, որպես ելակետային է ընտրվել «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի

կողմից տրամադրված **Ինժեներական քաղաքի հայեցակարգային Գլխավոր հաստակագիծը:**

Ներկայիս և ապագա (5, 10 և 20 տարի) որակի և երկարակեցության պահանջարկի ուսումնասիրությունների հիման վրա մշակել են Ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների նախագիծ, մասնավորապես.

- Հաղորդակցություն, այդ թվում տվյալների կենտրոն (տեղեկատվության և մոնիտորինգի կենտրոն)

- էլեկտրաէներգիայի մատակարարում, այդ թվում՝ արտաքին լուսավորություն
- գազամատակարարում
- աղբահանության կազմակերպում
- ջրամատակարարման և ջրահեռացման (կոյուղաջրերի) համակարգեր
- անձրևաջրերի հեռացում (հեղեղատար կոյուղի)
- ավտոկայանատեղի
- ոռոգման համակարգ
- ինժեներական քաղաքի ցանկապատի, մուտքերի (ելքերի) իրականացում
- անվտանգության համակարգեր
- հակահրդեհային համակարգեր
- հեծանվային արահետներ
- փողոցների պլանավորում
- հետիոտնային քարտեզներ
- տրանսպորտային ներքին շարժ, երթուղիներ և այլն
- հենապատեր:

Երևանի քաղաքապետարանի կողմից տրված և հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվությունը) բերված է [հավելված 3](#)-ում:

Վերոհիշյալ աշխատանքների ընթացքում իրականացվել է Ինժեներական քաղաքի 3 հա տարածքի, դրա անմիջական հարող շրջակայքի և նախատեսվող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների (սնուցող էլ. մալուխներ, գազատար, ջրագիծ, ոռոգման հնարավոր ջրագիծ, կոյուղատար և հեղեղատար) երկրաբանական և գեոդեզիական հետազոտություններ, վերլուծություններ: Իրականացվել են հավաքած տվյալների և դաշտային նյութերի մշակում:

Աշխատանքային այցելություններ են կատարվել Ինժեներական քաղաքի տարածք և ուսումնասիրվել է նախագծման ենթակա արտաքին և ներքին ինժեներական ենթակառուցվածքների ուղեգծերը և քաղաքի ամբողջ տարածքը, այդ թվում՝ մոտեցման ճանապարհների, բոլոր հնարավոր հեռանկարային արտաքին ենթակառուցվածքների՝ գազատարի, սնուցման ջրագծերի, կոյուղու, էլեկտրասնուցման հաղորդագծերի ուղեգծերի և միացման կետերի նախանշումով: Քննարկումներ են տեղի ունեցել ենթակառուցվածքները շահագործող կազմակերպությունների տեխնիկական մասնագետների հետ: Արդյունքում՝

1. Նախնական նշվել են արտաքին ինժեներական ենթակառուցվածքների միացման տեղերը և խողովակազծերի հնարավոր հետագծերը:
2. Մշակվել է ներհրապարակային ինժեներական ենթակառուցվածքների մայրուղային գծերի տեղադրվածության հիմնական սխեման, որի մանրամասներում ներկայացված գծերի փոխադարձ հատումներից զերծ մնալու և շինարարական նորմերը պահանջները պահպանելու սկզբունքը՝ ուղղաձիգ և հորիզոնական հարթություններում: Ինժեներական ենթակառուցվածքները նախատեսվում է տեղադրել քաղաքի փողոցների երկայնքով, հիմնականում ինժեներական շենքերին հարող կողմերում, մայթերի տակ, իսկ էլեկտրամատակարարման մալուխները՝ հակառակ մայթի տակի խրամուղում՝ 3-4 հորիզոնական շարքերով: Խրամուղիներում մալուխները նախատեսվում է տեղադրել պաշտպանիչ պատյան-խողովակների մեջ՝ կրծողներից և այլ արտաքին ազդեցություններից զերծ պահելու նպատակով: Նախատեսված է նաև պահուստային խողովակային ստորգետնյա անցումներ ԻՔ փողոցների ու մայթերի լայնական հատումով՝ հետագայում հնարավոր նոր կապուղիներ ապահովելու նպատակով:
3. Նախագծով ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔ ինժեներատեխնիկական ենթակառուցվածքների աշխատանքների պատշաճ կազմակերպման, սպասարկման և կառավարման համար նախատեսվել են հետևյալ շինությունները և տարածքները՝
 - Ինժեներական քաղաքում փակ տանիքով ավտոկայանատեղիի կառուցում,
 - խմելու և ոռոգման ջրերի պոմպակայաններ (ճնշումային հանգույց) 27.5մ² ընդհանուր մակերեսով, որը նախատեսված է Ինժեներական քաղաքի ավտոկայանատեղիի հարավային հատվածում,
 - էլեկտրամատակարարման տրանսֆորմատորային ենթակայան 2000 կՎտ հզորության երկու տրանսֆորմատորների, պահարանների, վահանակների և այլ էլ. սարքավորումների համար՝ 74մ² մակերեսով, նախատեսված է Ինժեներական քաղաքի ավտոկայանատեղիի հարավային հատվածում,
 - Ինժեներական քաղաքի հողատարածքի Բագրևանդի փողոցի հետ սահմանագծին՝ 4մ² մակերեսով շինություն 350 մ³/ժամ սպառման գազաբաշխիչ կայանի համար,
 - հաղորդակցության (ինտերնետ) հանգույցի պահարան՝ 2մ² մակերեսով, որը նախատեսված է Աքսելերատորի շենքի շրջակայքում,
 - աղբի հավաքման, տեսակավորման և առաքման հանգույց՝ 69.5մ² մակերեսով, որը նախատեսված է Ինժեներական քաղաքի ավտոկայանատեղիի հարավային հատվածում:

Ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների գլխավոր հատակագիծը (ներառյալ ճանապարհների, մայթերի, հենապատերի և տրանսպորտի շարժման հատակազծերը) բերված է [հավելված 5](#)-ում, որը կազմվել է հաշվի առնելով ինժեներական քաղաքի առանձնահատկությունները և տարածքի ռելիեֆային առանձնահատկությունները:

5. ԵՆԹԱԿԱՌՈՆԻՑՎԱԾՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՆՏԵՆՆԵՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

5.1. Ինտերնետային կապ և տվյալների կենտրոն (տեղեկատվության, մոնիտորինգի և կառավարման կենտրոն)

Ինժեներական քաղաքի ինտերնետային կապի հանգույցի պահարանը նախատեսվում է տեղադրել Աքսելերատորի շենքի շրջակայքում: Պահարանում նախատեսված են մալուխի միացման պանելներ՝ առնվազն 4 SC պորտանի (patch panel), որտեղից յուրաքանչյուր առանձին շենքի համար տրվում է թվով 24 օպտիկամանրաթելային մալուխներ՝ առանձին Աքսելերատորի շենքի, լաբորատոր մասնաշենքի և յուրաքանչյուր 22 ինժեներական շենքերի համար:

Մալուխների անընդհատությունը ապահովվելու նպատակով շենքերի հարակից տարածքում նախատեսվում է ցինկապատ թիթեղից ժամանակավոր խողովակատուփ՝ մալուխների փաթեթները մինչև շանքերի կառուցման ավարտը պահպանելու համար: Համապատասխան սարքավորումները հետագայում կտեղակայվեն շենքերի սերվերային պահոցներում:

Ինտերնետի արագությունը նախատեսվում է 20 Գբիթ/վայրկյան՝ 1200 աշխատակցի հաշվարկով: Ինտերնետային միացումը ապահովվելու է ինտերնետային ծառայություններ մատուցող (պրովայդեր) ընկերության կողմից:

Տվյալների կենտրոնը նախատեսվում է Աքսելերատորի շենքում և ունենալու է հատակազծայի 4,5x7,5մ² մակերես: Կենտրոնը նախատեսված է 1 անվտանգության աշխատակցի և 1 օպերատորի համար:

Նախագծով նախատեսված է Ինժեներական քաղաքի տարածքում տեղադրված տեսահսկողության համակարգի սարքավորումներից 7 օպտիկամանրաթելային մալուխներով 8 մուտքանի POE ուղղորդիներով (կոմուտատոր) ինֆորմացիան տեղափոխել տվյալների կենտրոնի RACK պահարանում տեղադրված DS-3E 1310 P-E խտացնող (կոնցենտրատոր) սարքավորումներ վրա, մշակել թվով 4 տեսաձայնագրող սարքերով և փոխանցել չորս մոնիտորներին, որոնք լինելու են անվտանգության աշխատակցի մշտադիտարկման տակ:

Ինժեներական քաղաքի էլեկտրաէներգիայի, գազի, խմելու և ոռոգման ջրի մուտքի հաշվիչների համար տեղադրված ռադիոմոդուլ (LORA WAN) Bera տվիչներից ինֆորմացիան ռադիոկապով կտեղափոխվի տվյալների կենտրոնի պահարանում տեղադրված բազային ընդունիչին, որը մշակված ինֆորմացիան կտա օպերատորի սնօրինման տակ գտնվող համակարգիչներին (մոնիտորներին): Բազային ընդունիչը նախատեսված է այնպիսի հզորությամբ, որպեսզի հետագայում հնարավոր լինի ընդունել նաև առանձին շենքերի (բաժանորդների) հաշվիչների տվյալները:

5.2. Էլեկտրաէներգիայի մատակարարում և արտաքին լուսավորություն

Ինժեներական քաղաքի տարածքի էլեկտրամատակարարման նախագիծը (380/220Վ) մշակվել է տարածքի համար «Ստորակետ» ճատրտարապետական ստուդիայի կողմից մշակված էսքիզային գլխավոր հատակագծին համապատասխան, որի հոսանքընդունիչների հուսալիությունը պատկանում է 1 կարգի սպառիչներին: Էլեկտրամատակարարման համար նախատեսվում են իրականացնել տարբեր հատվածքներով 0,4 կՎ ցածր լարման ստորգետնյա մալուխային հաղորդուղիներ: Մալուխները տեղադրվելու են տեխնիկական պլաստմասսաե խողովակներով, իսկ ճանապարհների անցումներում՝ մետաղական խողովակներով (պատյան):

Ինժեներական քաղաքի համալիր էլեկտրամատակարարումը 0.4 կՎ լարումով իրականացնելու նպատակով նախատեսված է 2x2000 ԿՎԱ հզորության 10/0.4 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայան, որի սնուցումը կատարվելու է էլեկտրաէներգիա մատակարարող ընկերության կողմից:

Ինժեներական քաղաքի սպառման ընդհանուր հզորությունը կազմում է 2750 կՎտ, որից.

- արսելերատորի շենք՝ 450 կՎտ
- լաբորատոր մասնաշենք՝ 200կՎտ
- գերհամակարգչային կենտրոն՝ 450 կՎտ
- ինժեներական շենքեր (22շենք x 75կՎտ =1650) 1650 կՎտ

10 կՎ լարման բաշխիչ սարքերը ընդունված են երկու սեկցիաների սեկցիավորված հատորների համակարգով: Ներածման խցիկները նախատեսված են 630 Ա բեռնվածքի անջատիչներով, իսկ տրանսֆորմատորի խցիկները 200 Ա անջատիչներով՝ կարճ միացման անջատելու հնարավորությամբ: Սեկցիավորումը կատարվում է երկու բեռնվածքի անջատիչներով:

Սեկցիաների սնուցումը իրականացվելու է ուժային տրանսֆորմատորներից՝ ավտոմատ անջատիչների միջոցով:

Նախատեսված է նաև անվտանգության տեխնիկայի պաշտպանական պարտադիր նվազագույն լրակազմ:

Ինժեներական քաղաքի արտաքին լուսավորության համակարգի և էլեկտրասնուցման համար տրանսֆորմատորային ենթակայանում նախատեսված է աշխատանքային (220Վ) և վերանորոգման լուսավորման (12Վ) 220/12 Վ իջեցնող տրանսֆորմատոր: Լուսավորության ցանցի բաշխումը կատարվում է լուսավորության վահանակից, որը սնվում է սեփական կարիքների պահարանից, իսկ վերջինս ABP-ի միջոցով միացած է 0.4 կՎ տրանսֆորմատորների մուտքային ավտոմատ անջատիչներին:

Արտաքին լուսավորության ցանցում լուսադիողային լուսավորության լամպերը տեղադրվելու են մետաղական հենասյունների վրա, որոնք սնվում են լուսավորության արկղից: Վերջինս իրենից ներկայացնում է ցածրավոլտ լրակազմով սարքավորում և օրվա ընթացքում ղեկավարում է արտաքին արհեստական լուսավորությունը, այն հնարավորություն է տալիս միացում և անջատում իրականացնել

հեռակառավարմամբ, ձեռքով և ֆոտոտվիչով՝ պայմանավորված բնական լուսավորության մակարդակից: Արկղի սնուցումը կատարվում է խրամուղիներում տեղադրված մալուխային համակարգով:

Ավտոկայանատեղիում նախատեսված է աշխատանքային էվակուացիոն լուսավորություն, որի սնուցումը նույնպես կատարվում է ենթակայանի լուսավորության վահանակից: Որպես լուսատուներ նախատեսված է խնայող լուսադիոդային լամպեր: Ավտոկայանատեղիի ընդհանուր լուսավորության համար նախատեսվում է լուսատուների տեղային կառավարում՝ հերմետիկ անջատիչներով:

Բոլոր էլեկտրամոնտաժայի սարքավորումները, լուսատուները, մալուխները և լարերը ընտրված են բարձր որակի և հուսալիության չափորոշիչներից ելնելով:

5.3. Գազամատակարարում

Նախնական հաշվարկների համաձայն Ինժեներական քաղաքի համար գազի առավելագույն սպառման պահանջարկը կազմում է 350 մ³/ժամ: Քաղաքի տարածքի շրջակայքի մասնագիտական դիդակտիկ ուսումնասիրությունների արդյունքում և մատակարար ընկերության մասնագետների հետ քննարկումների արդյունքում՝ գազամատակարարումը նպատակահարմար է իրականացնել Բագրևանդի փողոցի երկայնքով անցնող DN 160 PE միջին ճնշման ստորգետնյա գազատարից՝ հետագա տեխնիկական պայմանների առկայության և դրա պահանջներին համապատասխան: Գազատարի պայմանական միացման կետից 23 մ հեռավորության վրա նախատեսվում է տեղադրել պահարանով ճնշման կարգավորիչ՝ հաշվիչ հանգույցով և էլեկտրոնային ճշտիչով : Պահարանում տեղադրվելու է ռադիոմոդուլ (LORA WAN) vera, որը տվյալները փոխանցելու է տվյալների կենտրոն:

Նախագծով նախատեսվում է պոլիէթիլենային խողովակներով ստորգետնյա տեղադրումով գազամատակարարման ցանցի կառուցում: Գազ սպառող շինությունների մոտ գազատարը հանվելու է հողից դուրս և խցափակվելու է՝ էլքից առաջ պոլիէթիլեն-մետաղ անցումի իրականացմամբ: Խցափակվող խողովակները մինչև շենքերի կառուցման ավարտը և համակարգին դրանց միացումը ժամանակավոր կպահպանվեն ցինկապատ թիթեղից իրականացված խողովակատուփերում:

5.4. Աղբահանության կազմակերպում

Ինժեներական քաղաքի շենքերից և չկառուցապատված տարածքների աղբահանությունը նախատեսվում է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն: Միաժամանակ հաշվի են առնվել Հայաստանի Հանրապետության 2017-2036 թթ. կոշտ կենցաղային թափոնների կառավարման ազգային ռազմավարության գերակա նպատակները, համաձայն որի հանրապետության ողջ տարածքում նախատեսվում է ստեղծել կոշտ կենցաղային

թափոնների կառավարման ԵՄ չափանիշներին բավարարող, ինտեգրված համակարգ, որը տեխնիկական, ֆինանսական և բնապահպանական առումներով կայուն և ծախսարդյունավետ ծառայություն է տրամադրելու բնակչությանը և հիմնարկներին:

Հաշվի առնելով նաև Երևան քաղաքի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներն ու սկզբունքները, Ինժեներական քաղաքի հետագա հնարավոր թափոնները առաջարկվում է դասակարգել և տեսակավորել հետևյալ կերպ՝

- կենցաղային օրգանական թափոններ
- թուղթ և ստվարաթուղթ
- պլաստիկ տարաներ և իրեր
- ապակե տարաներ և իրեր
- մետաղական թափոններ
- էլեկտրոնային թափոններ (իրենց մեջ ներառում են բոլոր էլեկտրատեխնիկական սարքավորումները, հեռախոսները, գրասենյակային ու համակարգչային տեխնիկան և այլն):

Առաջարկվում է Ինժեներական քաղաքի յուրաքանչյուր շենքի հարկերի միջանցքներում նախատեսել համեմատաբար փոքր տարողության աղբի տարաներ՝ բաղկացած չորս մասերից, համապատասխան ցուցանակներով («Թուղթ», «Պլաստիկ», «Ապակի», «Մետաղ» և այլն): Այս տարաների մեջ տեղադրվելու են համապատասխան չափերի պոլիէթիլենային պարկեր (նախընտրելի է համապատասխան գույներով), որոնք սպասարկող անձնակազմի կողմից կարող են պարբերաբար շենքից դուրս բերվել և էլ. ավտոկառ մեքենայով տեղափոխվել տեսակավորված թափոնների համար նախատեսված շինություն, որը հատակագծում ունի 74մ² մակերես և առանձնացված սեկցիաներ՝ կահավորված անվավոր աղբարկղերով: Տեսակավորված աղբի ժամանակավոր կուտակումից հետո այն նախատեսվում է տեղափոխել համապատասխան ծառայություն իրականացնող ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքների համաձայն:

Հաշվի առնելով, որ օգտագործման ժամկետը լրացած, ֆիզիկապես և բարոյապես մաշված էլեկտրոնային սարքավորումներից հնարավոր է վերադարձնել նյութերի մոտ 80%-ը, դրանք վերաօգտագործել և միաժամանակ չվտանգել շրջակա միջավայրը, ինժեներական քաղաքի համար առաջարկվում է վարչական շենքում և յուրաքանչյուր ինժեներական առանձին կազմակերպություններում նախատեսել որոշակի պահեստատեղի՝ շահագործումից դուրս եկած տեխնիկական և սարքավորումները պահեստավորելու համար:

Հետագայում դրանք պայմանագրային հիմունքներով կհանձնվեն մասնագիտացած կազմակերպություններին՝ դրանց վերամշակման և/կամ ուտիլիզացիայի նպատակով:

5.5. Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր

5.5.1. Ջրամատակարարում

Ինժեներական քաղաքի առավելագույն հաշվարկային ջրապահանջը կկազմի 30.25 լ/վրկ, որը ներառում է խմելու-տնտեսական, արտաքին և ներքին հրդեհաշիջման համակարգի համար անհրաժեշտ ջրաքանակները:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից ստացված տեխնիկական պայմանի համաձայն (բերված է [հավելված 4](#)-ում), Ինժեներական քաղաքի տարածքի խմելու-տնտեսական, ներքին և արտաքին հակահրդեհային համակարգերին ջուրը տրվելու է Բագրևանդի փողոցով անցնող, ստորգետնյա տեղադրված 700 մմ տրամագծով մետաղական մայր ջրատարից, որտեղ ճնշումը 1.8 մթն. է: Մայր ջրատարին միացումն իրականացվելու DN200 պողպատե խողովակով: Վերջինիս վրա նախատեսված է փական, որը տեղադրվելու է ե/բ կլոր էլեմենտներից կառուցվող հորում (H=1.5մ, D=1.0մ): Այնուհետև ջուրը de200 (PE) խողովակներով 200 մ տեղափոխվելու է այն տարածք, որի սահմանազատման կետում նախատեսված է ջրաչափական հանգույցի կառուցում՝ ուղղանկյուն ե/բ մոնոլիտ հորում: Ջրաչափական հանգույցում նախատեսվում է տեղադրել ռադիոմոդուլ (LORA WAN) vera, որը տվյալները կփոխանցի տվյալների կենտրոն: Նախատեսվող ջրաչափը և մոնտաժային աշխատանքները իրականացվելու է շահագործող կազմակերպության՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից:

Ինժեներական քաղաքի տարածքում նախատեսվող ինժեներատեխնիկական էնթալթառուցվածքների ջրամատակարարման համակարգին պահանջվող ճնշումն ապահովելու, նորմալ շահագործման, սպասարկման և կառավարման համար, նախատեսվում է ջրամատակարարման պոմպային կայանքի տեղադրում՝ ԻՔ տարածքում նախատեսվող պոմպակայանի շենքում: Պոմպի միջոցով ջուրը կմղվի ինժեներական քաղաքի ներտնտեսային բաշխիչ ցանց:

Նախատեսվում է տեղադրել H=43մ, Q=27լ/վ արտադրողականության 3 պոմպով աշխատող պոմպային կայանք՝ համալրված ավտոմատ կառավարման համակարգով, ցածր ճնշման ռելեով, ուղղաձիգ մեմբրանային 33լ տարողությամբ մետաղական բաքով: Տեղադրվող պոմպային կայանքը ներառելու է 3 պամպեր և նախատեսված է փոփոխական ռեժիմով աշխատող ջրամատակարարման համակարգերի համար. փոքր ելքերի դեպքում աշխատում է 1 պոմպը, ելքի ավելացմանը զուգընթաց ավտոմատ միանում են 2-րդ և 3-րդ պոմպերը:

Բաշխիչ ցանցի խողովակների ուղեգծերը տեղադրվելու են ստորգետնյա խրամուղիներով, իսկ յուրաքանչյուր առանձին շենքերի մուտքագծերը միացվելու են խողովակաշարերին:

Ինժեներական շենքերի մուտքագծերի վրա, սահմանազատման տեղում նախատեսվել են տնային միացման ջրաչափական հանգույցների համար թվով 22 պոլիմերավազային հորեր և թվով 1 հոր ջրային ավազանի համար, իսկ Աքսելերատորի շենքի և լաբորատոր մասնաշենքի համար թվով 2 ե/բ հորեր:

Հորերում նախատեսվում է տեղադրել համապատասխան տրամագծերի փականեր և խցափակիչներ:

Ներքին հակահրդեհային ելք պահանջող շինությունների ջրի մուտքագծի վրա նախատեսվում է տեղադրել DN50 մմ փական և խցափակիչ: Հանգույցը մոնտաժվելու է հավաքովի ե/բ կլոր էլեմենտներից կառուցվող հորում: Փականից հետո շենք գնացող խողովակները ժամանակավոր խցափակվելու են՝ հետագայում ջրամատակարարման մուտքագծերին միացնելու նպատակով:

Ջրամատակարարման համակարգի նորմալ շահագործման և կարգավորման համար ներտնտեսային բաշխիչ ցանցում նախատեսվել են փականային հանգույցների կառուցում՝ ե/բ կլոր էլեմենտներից հավաքովի հորերում: Նախատեսվել են D=1.5մ, H=1.5մ; D=1.5մ, H=1.8մ չափերի հորերի կառուցում՝ յուրաքանչյուրից 2 հատ:

Արտաքին հրդեհաշիջման համար նախատեսվել են 4 հակահրդեհային հիդրանտների, որոնցից յուրաքանչյուրը տեղադրվելու է ե/բ կլոր էլեմենտներից հավաքովի հորում: Հիդրանտները տեղադրվելու են նորմաներին համապատասխան, հրդեհաշիջման համար անհրաժեշտ ճնշում և ջրաքանակ ապահովող ջրամատակարարման խողովակների վրա՝ փողոցների երթևեկելի հատվածների մոտ, ճանապարհների խաչմերուկներում: Ավտոկայանատեղիում նախատեսվել է 3 հրդեհային ծորակների տեղադրում՝ պլաստիկ պահարաններում:

5.5.2. Ջրահեռացում

Ինժեներական քաղաքի բոլոր շենքերի և շինությունների սանիտարական սարքավորումներից կոյուղաջրերը թողարկներով ինքնահոս հեռացվելու են դեպի կոյուղու դիտահորեր: Խողովակների ուղեգծերը նախատեսվել են հնարավորինս ուղղագիծ: Դիտահորերը նախատեսվել են յուրաքանչյուր առանձին կառույցի համար կոյուղու դուրս եկող թողարկի վրա, խողովակաշարերի միացման հանգույցներում, թեքման անկյուններում, կախված խողովակների տրամագծերից՝ 35-50մ-ի վրա: Կոյուղու դիտահորերը կառուցվելու են հավաքովի ե/բ D=1.0մ տրամագծի կլոր էլեմենտներից: Ներքին ցանցում նախատեսվում տեղադրել 32 հատ դիտահորեր, իսկ արտաքին կոլեկտորի վրա՝ 40 հատ դիտահորեր:

Տարածքից կոյուղաջրերի առավելագույն ելքը կազմում է 8.3լ/վրկ (հաձայն ՀՀՇՆ 2.04.03-85 Կոյուղի: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ):

Ներտնտեսային կոյուղու ցանցը նախատեսվում է իրականացնել de160 PVC խողովակներով, որը ինքնահոս հեռացվելու է տարածքի ցածրադիր հատված: Կառուցապատվող տարածքից կոյուղին de200 PVC կոյուղու խողովակներով տեղափոխվելու է և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից ստացված տեխնիկական պայմանի համաձայն, և միացվելու է Մոլդովական փողոցի 19-21 շենքերին հարակից գործող Փ400 կոյուղու կոլեկտորի դիտահորին:

Ներտնտեսային ցանցում նախատեսվում է տեղադրել L=22մ de110, L=515մ de160, L=64մ de200 PVC կոյուղու խողովակներ: Արտաքին կոլեկտորում տեղադրվելու են L=1337 մ ընդհանուր երկարությամբ de 200 PVC խողովակներ:

Ինժեներական քաղաքի տարածքում և նրա տարածքից դուրս ներտնտեսային կոյուղու հիմնական հավաքող խողովակաշարերը կմոնտաժվեն նորմաներին համապատասխան չափեր ունեցող ստորգետնյա խրամուղիներում:

5.5.3. Անձրանջրերի հեռացում

Ինժեներական քաղաքի կառուցապատված և ասֆալտապատված մակերեսներից անձրևաջրերը կհեռացվեն փողոցների երկայնքով, այդ թվում՝ ներքին ավտոկայանատեղիի մասում, նախատեսվող ստորգետնյա հեղեղատար համակարգով: Մակերևույթային ջրերի ջրընդունիչ հորերով, որոնք ծածկված են թուջե ճաղավանդակ ունեցող սալերով, հավաքված ջուրը հեղեղատար de250 խողովակներով կտեղափոխվի տարածքի ռելիեֆի ցածրադիր հատվածը, այնուհետև «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից ստացված տեխնիկական պայմանի համաձայն, de300 խողովակներով (L=1518մ) կմիացվի Մոլդովական և Թոթովենցի փողոցների հատման խաչմերուկին հարող Մոլդովական 19-21 շենքերից սկսած գործող 300մմ տրամագծով մետաղական հեղեղատարին:

Հեղեղատար խողովակների միացման հանգույցներում նախատեսված են հավաքովի ե/բ կլոր էլեմենտներից դիտահորերի կառուցում 33 հատ:

Ներտնտեսային հեղեղատար կոյուղու կառուցման համար նախատեսվել են 201մ երկարությամբ de200 խողովակ, 255մ երկարությամբ de250 խողովակ, 135մ երկարությամբ de300 խողովակ:

Նախատեսվում է տեղադրել թուջե ճաղավանդակներով 19 հատ եր/բ անձրևահավաք հորեր, հեղեղատարի ե/բ 11հատ դիտահորեր:

Ջրամատակարարման, կենցաղային կոյուղու, հեղեղատար կոյուղու համակարգերի խողովակաշարերը նախատեսվում է տեղադրել ստորգետնյա՝ նորմաներին համապատասխան կտրվածքներ ունեցող խրամուղիներում:

5.5.4. Ոռոգման համակարգ

Ինժեներական քաղաքում նախատեսվող կանաչապատ տարածքի (տարածքի բարեկարգման և կանաչապատման նախագիծն իրականացվել է այլ Խորհրդատուի՝ Ստորակետ ճարտարապետական ստուդիայի կողմից, որը պատասխանատու է կանաչապատման լուծումների և կանաչապատման նախագծի հաստատման համար) համար անհրաժեշտ ջրի էլքը և ճնշում ապահովելու նպատակով, նախատեսվում է ոռոգման պոմպային կայանքի տեղադրում՝ տարածքում նախատեսվող պոմպակայանի շենքում: Նախատեսվել է տեղադրել H=45մ, Q=3լ/վ արտադրողականության 2 պոմպով աշխատող պոմպային կայանք՝ համալրված ավտոմատ կառավարման համակարգով, ցածր ճնշման ռելեով, ուղղաձիգ

մեմբրանային Ցլ տարողությամբ մետաղական բաքով: Տեղադրվող պոմպային կայանքը նախատեսված է փոփոխական ռեժիմով աշխատող համակարգերի համար, փոքր ելքերի դեպքում աշխատում է 1 պոմպը, իսկ ելքի ավելացմանը զուգընթաց ավտոմատ միանում է 2-րդ պոմպը: Մուտքի ջրաչափի համար տեղադրվում է ռադիոնոդուլ (LORA WAN) vera, որը տվյալները փոխանցում է տվյալների կենտրոն:

Ինժեներական քաղաքի կանաչ գոտիների ռոտզումը նախատեսված է երեք եղանակներով՝

1. ռոտզում ստորգետնյա կաթիլային եղանակով,
2. ռոտզում անձրևացման եղանակով,
3. ռոտզում մակերեսային եղանակով:

Կաթիլային և անձրևացման եղանակներով ռոտզման տարածքները բաժանվել են տեղամասերի՝ ընդհանուրը 6 տեղամաս: Տեղամասերը ջրվելու են հերթականությամբ:

Կաթիլային ռոտզման տեղամասը բաժանված է 4 բլոկերի, որոնք իրենց հերթին ևս ջրվում են հերթականությամբ: Կաթիլային և անձրևացման եղանակներով ռոտզումը ավտոմատացված է՝ ջրի միացումն ու անջատումն իրականացվելու է ըստ ծրագրավորված ժամերի:

Մակերեսային ռոտզումը նախատեսվում է իրականացնել հիդրանտների վրա տեղադրված փականների և դրանց հետ միացվող ճկափող խողովակների միջոցով: Կաթիլային և անձրևացման ապարատները պահանջում են մաքուր ջուր, որը ապահովում է պոմպակայանի հանգույցում տեղադրված դիսկային ֆիլտրը: Նույն հանգույցում տեղադրված է նաև իմպուլսային հոսքաչափ, որը ջրահոսքի տվյալները փոխանցում է տվյալների կենտրոն:

Աղյուսակ 1. Ռոտզման համակարգի հիմնական ցուցանիշներ

Անվանումը	Մակերես, մ ²	Ռոտզման եղանակ	Հաշվարկային ջրի ծախս, լ/վրկ	Ջրման տևողություն, ժամ	Հիմնական խողովակներ, մ	Հիմնական սարքեր սարքավորումներ		
						Անձրևացման ապարատներ, հատ	Կաթոցիկներով խողովակներ, մ/կաթոցիկ	Հիդրանտներ, հատ
Արտաքին և մակերեսային ռոտզման համակարգ	3800	մակերեսային	2.0 (2 հիդրանտ միասին)	0.57 (2 հիդրանտ միասին)	535			11
Տեղամաս 1	3375	Կաթիլային	1.88 (մեկ բլոկ)	0,75	260		6750/20250 (1 բլոկի միջինը 1688մ կամ 3375 հատ կաթոցիկ)	
Տեղամաս 2	598	անձրևացում	1.7	0,59	117	12		
Տեղամաս 3	449	անձրևացում	1.5	0,5	123	20		
Տեղամաս 4	621	անձրևացում	2.1	0,49	108	11		
Տեղամաս 5	414	անձրևացում	1.5	0,46	98	17		
Տեղամաս 6	570	անձրևացում	1.65	0,58	133	22		
Ընդամենը	9827				1374	82	6750	11

Ամբողջ մակերեսի ջրման համար օրական պահանջվող առավելագույն տևողությունը կազմում է 8.8 ժամ:

Ոռոգում ստորգետնյա կաթիլային եղանակով

Տեղամաս 1-ի ոռոգումը (ավտոկայանի ծածկ) նախատեսված է կաթիլային եղանակով: Ընդհանուր մակերեսը մոտ 0.34 հա և այն բաժանված է 4 բլոկերի: Բլոկերի ջրի հաշվարկային միջին ծախսը կազմում է 1.88 լ/վ: Բլոկերը ջրվում են հերթականությամբ: Մեկ բլոկի ջրման առավելագույն ժամանակահատվածը 0.75 ժամ է: Մեկ բլոկում միաժամանակ աշխատող միջին կաթոցիկների թիվն կազմում է 3375: Տեղամաս 1-ի օրական ոռոգումը ավարտվում է 3 ժամում: Ամեն մի բլոկի ջրի միացում և անջատումը իրականացվում է ավտոմատ կերպով էլեկտրամագնիսական կափույրի միջոցով, որը տեղադրվում է յուրաքանչյուր բաժանարար խողովակաշարի սկզբնամասում: Կափույրների միացումն ու անջատումն իրականացվում է դրսում տեղադրվող ծրագրավորված մեկ կարգավորիչի (контролер) միջոցով (X-CORE, «HUNTER» ԱՄՆ):

Ոռոգման ցանցը նախատեսված է մագիստրալ, բաժանարար և ոռոգման ջրատարներից: Մագիստրալ և բաժանարար գծերը ճնշումային պոլիէթիլենային խողովակներ են՝ PE100, P=0,6MPa ГОСТ 18599-2001, իսկ ոռոգման գծերը՝ կաթիլային պոլիէթիլենային խողովակներ d=16մմ, պատի հաստությունը 1.1մմ, ճնշումը 60մ, կոմպենսացվող կաթոցիկներով, կաթոցիկների քայլը 50 սմ, ծախսը 2լ/ժ: Ոռոգման խողովակները տեղադրվում են իրարից 0.5 մ հեռավորության վրա (արտադրող՝ «Evropolimer», Բուլղարիա):

Էլեկտրամագնիսական կափույրները և փականները տեղադրվում են պլաստիկ հորերի մեջ: Էլեկտրամագնիսական կափույրները համակցված են 24Վ սոլենոիդներով և ճնշման կարգավորիչներով:

Ոռոգում անձրևացման եղանակով

2-ից 6-րդ տեղամասերի ոռոգումը նախատեսվում է իրականացնել անրևացման եղանակով: Ելնելով տեղամասերի մակերեսների չափերից և կոնֆիգուրացիայից ընտրվել են 3 տիպի ռոտորային անձրևացման ապարատներ: Անձրևացումը նախատեսվում է իրականացնել ժամանակակից ռոտորային անձրևացման ապարատներով: Առաջարկվում են օգտագործել «HUNTER» ԱՄՆ-ի արտադրության կամ նույն տեխնիկական ցուցանիշներով ավելի բարձր որակի ապարատներ:

Աղյուսակ 2. Առաջարվող անձրևացման ապարատների ցուցանիշներ

PGP-վարդակ 3.0 (Տեղամաս 2)		PGP-վարդակ 4.0 (Տեղամաս 4)		SMR-վարդակ 1,5 (Տեղամասեր 3, 5, 6)	
Ճնշումը	1,7 բար	Ճնշումը	1,7 բար	Ճնշումը	1,7 բար
Շառավիղը	10,7 մ	Շառավիղը	11,3 մ	Շառավիղը	6.7 մ
Ծախսը	0,14 լ/վրկ	Ծախսը	0,188 լ/վրկ	Ծախսը	0,075 լ/վ

Անձրևացման ապարատները ոռոգման խողովակաշարի հետ նախատեսվում է միացնել 30 սմ երկարությամբ շարժական միացումների միջոցով: Ամեն մի տեղամասի ջրի միացումն ու անջատումն իրականացվելու է ավտոմատ կերպով էլեկտրամագնիսական կափույրի միջոցով, որը տեղադրվելու է յուրաքանչյուր տեղամասի ոռոգման ցանցի սկզբնամասում՝ խողովակաշարի վրա: Տեղամասային կափույրների միացումն ու անջատումը իրականացվելու է հերթականությամբ՝ դրսում տեղադրվող ծրագրավորված կարգավորիչի (контролер) միջոցով:

Ոռոգում մակերեսային եղանակով

Բացի վերոնշյալ ոռոգման երկու եղանակներով նախատեսված ոռոգման ցանցերի, նախագծում նախատեսված են նաև ինժեներական շենքերի շրջակա փոքր մակերեսներով կանաչ գոտիների ոռոգում: Դրա համար նախատեսվել են ոռոգման/բաժանարար ջրագծեր՝ հիդրանտներով: Հիդրանտների միջոցով իրականացվելու է մակերեսային ոռոգում: Հիդրանտներից հետո, ոռոգման/ներքին ցանց չի նախատեսված: Նախագծով նախատեսված է ճկափող D=32 մմ, որը միացվում է հիդրանտների վրա տեղադրված D=32 մմ-ոց փականին: Հետագայում այդ հիդրանտներից հետո հնարավոր է շարունակել ոռոգման կաթիլային կամ անձրևացման եղանակով խողովակային ցանցի կառուցումը:

5.6. Տեսահսկողություն և հակահրդեհային անվտանգություն

Ինժեներական քաղաքի անվտանգությունն ապահովվելու նպատակով ամբողջ տարածքը վերցվելու է տեսանկարահանող սարքերի տեսաձայնային տիրույթ: Նպատակահարմար է օգտագործել թվային IP տեսախցիկներ, որոնցով կազմված ցանցը հնարավորություն է տալիս կողավորել տեսահսկողության, հաղորդել դրանք համակարգչային ցանցով շատ մեծ հեռավորությունների վրա՝ չնչին կորուստներով, ապահովում է դյուրին միացում տվյալների հաղորդման թվային ցանցին: Տեղեկատվական տվյալները կարխիվացվեն տվյալների պահպանման համակարգում՝ հետագա օգտագործման համար:

Նախատեսվում է կիրառել ծրագրավորման նոր SMD համակարգ, որը արհեստական ինտելեկտի շնորհիվ հնարավորություն է տալիս տարանջատել շարժվող առարկաները՝ արձագանքելով մարդկանց և մեքենաների տեղաշարժին, սակայն չի արձագանքում կենդանիների, միջատների և ծառերի տեղաշարժին: Այդ պատճառով խիստ նվազում է կեղծ ահազանգերի թիվը և նվազեցվում օգտագործվող թվային դիսկերի քանակը:

Նախատեսվում է տեսախցիկներ տեղադրել ինժեներական քաղաքի ցանկապատի սյուների և արտաքին լուսավորության հենասյուների վրա՝ կառուցվող շինությունների մուտքերի, ազատ տարածքների, մեքենաների կայանատեղիի և լաբորատորիայի շրջակայքում:

Տեսախցիկները նախատեսվում է տեղադրել 3մ բարձրությամբ մետաղե սյուների վրա: Ամեն մի IP տեսախցիկը կունենա իր հասցեն:

Յուրաքանչյուր 8 տեսախցիկները միացվում են մեկ POE ուղղորդչին, որից ստանում են սնուցումեն: Խտացված ինֆորմացիան օպտիկական մալուխով հաղորդվում է տվյալների կենտրոն և միացվում խտացնող սարքի մեկ մուտքին, իսկ մյուս 7 մուտքերը կարող են սպասարկել ևս 7 ուղղորդիչների, այսպիսով, սպասարկելով մինչև 64 տեսախցիկ: Նախատեսվում է օգտագործել Hikvision ֆիրմայի DS -3 E 0524 TF խտացնող սարք:

Ուղղորդիչները նախատեսվում է տեղադրել դրսում հերմետիկ արկղների մեջ՝ տեսախցիկների համար նախատեսված մետաղե սյուների վրա: Նախատեսվում է օգտագործել 48 հատ տեսախցիկ: Հետագայում, անհրաժեշտության դեպքում, տվյալ համակարգը թույլ է կտա տեղադրել ևս 16 տեսախցիկներ:

Տվյալների կենտրոնում գտնվող խտացնող սարքերի էլքից ամբողջ ինֆորմացիան հաղորդվում է 4 տեսագրանցող սարքերին (DS-7716 NI-K4) և մոնիտորներին:

Նույն տեսախցիկները ապահովում են նաև Ինժեներական քաղաքի հակահրդեհային անվտանգությունը: Դրանց շնորհիվ կրակի և ծխի տեսագրանցումը հրդեհի ամենաարագ և ճիշտ հայտնաբերումն է ապահովում՝ օգտագործելով տեսապատկերների վերլուծությունը:

Ավտոկայանտեղիում նախատեսվում է տեղադրել նաև 3 հատ 5 լիտրանոց հակահրդեհային ապահովության (բացի հիդրանտներից և հիդրանտային ծորակներից) կրակմարիչներ ՕՍ-4 մակնիշի՝ փոշենյութային տիպի:

Օպերատորը տվյալների կենտրոնում թվով 4 մոնիտորներ վրա կարող է տեսնել բոլոր տեսախցիկներից ստացված ինֆորմացիան կամ ցանկացած պահի ընտրել և դիտել ցանկացած մեկ կամ մի քանի տեսախցիկների ինֆորմացիան, ինչպես նաև՝ արձագանքել ահազանգերին:

Լուսային և ձայնային ահազանգող սարքը նախատեսվում է տեղադրել ավտոկայանատեղիում:

Տեսախցիկների միացման բոլոր մալուխներն անցկացվելու են գետնի տակով, իսկ ավտոկայանատեղիինը՝ առաստաղով:

Գազամատակարարման տեղեկատվության համար նախատեսվում է օգտագործել Lora WAN կապով աշխատող գազի հաշվիչներ՝ Berap ֆիրմայի СГБМ-4 տիպի: Հաշվիչի մեջ տեղադրված էլ. սնուցման աղբյուրը կարող է աշխատել մինչև 7 տարի: Աշխատանքային հաճախականությունը 868 մգհց է: Տվիչը կտեղադրվի մուտքի հիմնական հաշվիչի վրա, իսկ տվյալների կենտրոնը համալրված կլինի հետագայում բոլոր ինժեներական շենքերի բաժանորդային հաշվիչներից տեղեկատվություն ստանալու, մշակելու և պահպանելու հնարավորությամբ: Կենտրոնում տեղադրված բազային ընդունիչը միաժամանակ սպասարկել ավելի քան 24 հաղորդչի:

Էլեկտրամատակարարման տեղեկատվության համար նախատեսվում է օգտագործել եռաֆազ հաշվիչներ, որոնք կարող են չափել ամեն մի ֆազի հոսանքը և լարումը, յուրաքանչյուր ֆազի ակտիվ և ռեակտիվ էներգիան, ինչպես նաև՝ օգտագործվող էներգիան: Այդ հաշվիչներում նախատեսվում է տեղադրել Lora WAN

ռադիոկապի մոդուլներ, որոնք ավելի քան 5կմ անխափան կապ կապահովեն: Տվիչը կտեղադրվի մուտքի հիմնական հաշվիչի վրա, իսկ տվյալների կենտրոնը համալրված կլինի հետագայում բոլոր ինժեներական շենքերի բաժանորդային հաշվիչներից տեղեկատվություն ստանալու, մշակելու և պահպանելու հնարավորությամբ: Կենտրոնում տեղադրված բազային ընդունիչը կարող է սպասարկել ավելի քան 24 հաղորդիչ:

Ջրամատակարարման տեղեկատվության համար ջրաչափական հանգույցում նախատեսվում է տեղադրել Lora WAN հաղորդիչ, որը սնվում է AA տեսակի էլեմենտներով և կարող են անխափան աշխատել ավելի քան 5-6 տարի: Lora WAN համակարգը, որի աշխատանքային հաճախականությունը 868 մգհց է, հաղորդիչ էլքային հզորությունը 10 մվտ, կարող է կայուն կապ ապահովել խիտ կառուցված տեղանքում՝ մինչև 5 կմ տարածության վրա: Ինֆորմացիոն սենյակում տեղադրված բազային ընդունիչը կարող է միաժամանակ սպասարկել 24 հաղորդիչ, որը բավարարում է Ինժեներական քաղաքի պահանջներին: Համապատասխան ծրագրավորմամբ կարելի է ցանկացած պահի և ցանկացած տեղեկատվություն ստանալ տարբեր հաշվիչներից ջրի ծախսի մասին: Կենտրոնում, որպես ընդունիչ, կարելի է օգտագործել Bera BC-2.2 ընդունիչը, որն ընդունակ է սպասարկել 24 հաղորդիչ:

Ոռոգման համակարգի ավտոմատ կառավարումն իրականացվել է հաշվի առնելով, որ Ինժեներական քաղաքում S1 տարածքը ոռոգվում է կաթիլային եղանակով, իսկ մնացածը՝ ցայտիչներով: Քանի որ մատուցվող ջրի քանակը սահմանափակ է, ուստի որոշվել է ոռոգումը տարածքներում կատարել հերթականությամբ: Բոլոր տարածքները սպասարկող դիտահորերում նախատեսվում է տեղադրել Hunter ֆիրմայի PGV էլեկտրամագնիսական փականներ, որոնց ղեկավարումը կատարվում է Hunter ֆիրմայի X-CORE հսկիչներով /контроллер/: Դրանք սնվում են փոփոխական 220 վ լարումով, իսկ փականին տրվող էլքային լարումը 24 վ է: Հսկիչները կարելի է այնպես ծրագրավորել, որ փականները բացվեն ու փակվեն ցանկացած օր, ցանկացած ժամի և ցանկացած հերթականությամբ: Փականներին տրվող լարումն անցկացվում է ոռոգման ջրագծերի տեղադրման համար նախատեսված խրամուղիների մեջ: Նպատակահարմար է S1 տարածքում 4 էլք ունեցող Hunter հսկիչը տեղադրել տեղամասի մեջտեղում /E կետ/ լուսային սյան վրա, գետնից 1.5 մ բարձրությամբ: Հսկիչ սարքից էլեկտրական լարումը մալուխներով տրվում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ մասերի փականներին խրամուղու մեջ: S2, S3 և S4 տեղամասերի համար, որտեղ ոռոգումը կատարվում է ցայտիչներով, տեղադրվում է նույն տիպի 4 էլքային Hunter հսկիչ /D կետում/, որը նույնպես ծրագրավորվում է այդ տեղամասերը հերթով ոռոգելու համար: S5 և S6 հողամասերը ոռոգվում են F կետում տեղադրված 2 էլքային Hunter հսկիչ սարքով, որը նույնպես ծրագրավորված է համապատասխանաբար:

Ինժեներական քաղաքի մուտքերի ավտոմատ կառավարում: Ինժեներական քաղաքն ունի 6 մուտքեր՝ մետաղե ճաղավանդակով դարպասներով, որոնցից 1 մ

հեռավորությամբ՝ արգելափակոցներ: Նախատեսվում է տեղադրել 4 մ լայնությամբ երկփեղկանի մետաղե դարպասներ, որոնց բացվել ու փակվելը կատարվում է 2 էլեկտրական շարժիչների միջոցով: Genius ֆիրմայի G-Bat kit մոդելի շարժիչները հնարավոր է աշխատեցնել հեռակառավարման վահանակով: Շարժիչները, որոնց սնուցումը 220վ է, կարող են աշխատել -40°C -ից $+55^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի դեպքում: Նախատեսվում է տեղադրել Genius ֆիրմայի, SPIN-4C-ENC մոդելի արգելափակոցներ, որոնց սնուցումը 220 վ է, հզորությունը՝ 250վտ: Արգելափակոցները կարող են աշխատել ինչպես հեռակառավարման վահանակի, այնպես էլ բջջային հեռախոսի միջոցով /GSM/ զանգով: Դարպասների և արգելափակոցների սնուցումը կատարվում է մոտակա լուսատու սյունից BBΓԻԴ 2x 2,5 մմ քառ. մալուխով՝ գետնի տակով:

5.7. Փակ ավտոկայանատղի

Նախագծով նախատեսվում է Ինժեներական քաղաքի տարածքում կառուցել ե/բ կարկասով փակ տանիքով ավտոկայանատեղի 118 մարդատար ավտոմեքենայի կայանման համար, այդ թվում էլեկտրամոբիլներ, որոնց լիցքավորման համար նախատեսված է 3 լիցքավորման սարքավորումների տեղադրում:

Ավտոկայանատեղիի կառուցապատման մակերեսը կազմում է 3600մ^2 , որն հատակագծում ունի 150.1×24 մ առանցքային չափեր, բարձրությունը 3.3 մ՝ 1-ից 26 առանցքներով է, և 4.0 մ 27-ից 29 առանցքներով:

Հատակագծում կարկասի 50×50 սմ կտրվածքի չափերով սյուները հիմնականում տեղադրված են 6×6 մ ցանցով, լայնական և երկայնական ուղղություններով հեծանները խաչվում են, որոնք կտրվածքում նույնպես 50×50 սմ չափերի են:

Հիմքերը կետային են երկաթբետոնե, պատերը երկու շարք խարամաբետոնե բլոկներով է նախատեսված 400 մմ հաստությամբ, միջնապատերը նույնպես խարամաբետոնե բլոկներով են՝ 100 -ից 200 մմ հաստությամբ:

Հատակը ամրանավորված բետոնով է, իսկ ինժեներական ենթակառուցվածքների սպասարկման հանգույցներում (ենթակայան, պոմպակայաններ, աղբի հանգույց, օժանդակ սենյակ)՝ կերամոզրանիտե ծածկույթով:

Ծածկերը իրականացվում են միաձույլ ե/բ սալերից՝ 200 մմ հաստությամբ: Նախատեսվում կարկասի երեք սեյսմիկ կար, հատակի սալի համար աշխատանքային կար՝ յուրաքանչյուր 6 մ քայլի պարբերությամբ:

Ավտոկայանատեղիի տարածքը ե/բ միաձույլ աստիճանավանդակներով միանում է ծածկի մակերևույթի հետ: Աստիճանները նույնպես երեսապատվում են 30 մմ հաստությամբ բազալտե երեսապատման սալիկներով՝ մետաղական Bp4 ցանցի վրա, քայլը 50×50 մմ:

Տանիքը հարթ է, 1-ից 26 առանցքներով կանաչապատ (սիզամարգ) ծածկույթով, իսկ 27-ից 29 առանցքներով ծածկույթը պոլիուրեթային է:

Ավտոկայանատեղի հարավային հատվածում տեղադրված են էլ. ենթակայանը, խմելու և ոռոգման ջրերի պոմպակայանները, օժանդակ սենյակ՝ սանհանգույցով և աղբի տեսակավորման հանգույցը:

5.8. Փողոցներ, մայթեր և հեծանվուղիներ

Ինժեներական քաղաքի փողոցների լայնությունը նախատեսված է 6.1գծմ, որից 3.1գծմ նախատեսված է ավտոմոբիլների միակողմանի տեղաշարժի համար, իսկ մյուս 3 գծմ-ը (2x1.5գծմ) երկկողմ երթևեկության հեծանվուղիների համար՝ ապահովված համապատասխան գծանշումներով: Փողոցների և հեծանվուղիների ասֆալտե ծածկույթի մակերեսը կազմում է 3355մ²:

Ինժեներական քաղաքի տարածքի մայթերը տեղակայված են հիմնականում փողոցների երկու կողմերում, որոնց լայնությունը եզրաքարերի հետ միասին կազմում է 1.5 գծ.մ: Մայթերը նախատեսվում է սալապատել 10x10x5 սմ³ սալիկներով, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 1026մ²: Մայթերի եզրաքարերը փողոցների ասֆալտի ծածկույթին հարող մասերում նախատեսվում է 10x20 սմ² կտրվածքով բազալտե քարերից՝ անկյունը 45° տաշվածքով, որը կազմում է 931 գծ.մ., իսկ գազոննորին հարող մասերում 10x20 սմ² կտրվածքով ե/բ եզրաքարերով, որը կազմում է 682գծմ.:

5.9. Հենապատեր

Ելնելով Ինժեներական քաղաքի տարածքում և պարագծի երկայնքով ուղղաձիգ նշահարման մակարդակների տարբերություններից՝ ցանկապատի որոշ հատվածներում և փողոցների եզրերում նախագծվել են բուտաբետոնե հենապատեր, որից 150գծմ. ավտոկայանատեղի հատվածում, 116գծմ. տարածքի հարավային ցանկապատի երկայնքով և 66գծմ. Բագրևանդի փողոցին հարող ցանկապատի երկայնքով: Նախատեսվում է հենապատերի հիմքերը իրականացնել բուտաբետոնով, իսկ հենապատերը B15 բետոնով: Ընդհանուր ծավալը (հենապատեր և հիմքեր) կազմում է 389,4մ³:

6. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

6.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր

Շինարարական աշխատանքների իրականացումը բաժանված է երկու փուլի: Առաջին փուլը նախապատրաստական շրջանն է, իսկ երկրորդ փուլում իրականացվում են հիմնական աշխատանքները:

Նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- շինհրապարակի արտաքին տարածքի սահմանազատում ժամանակավոր ցանկապատով՝ 690մ ընդհանուր երկարությամբ: Ժամանակավոր ցանկապատը պետք է կահավորված լինի հովհարով, լուսավորությունով և արգելափակիչ նշաններով ավտոճանապարհի կողմից:
- ժամանակավոր տնտեսության շենքերի և կառուցվածքների տեղակայում նախապես հարթեցված տարածքում /վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում՝ ըստ պահանջի/:
- շինարարական տեղամասերի լուսավորության ապահովում:

Հիմնական փուլում իրականացվելու են հետևյալ հիմնական աշխատանքները.

- *Շինարարական/մոնտաժման աշխատանքների* իրականացում, որի ժամանակ հիմնական աշխատանքների շինհրապարակը պայմանական բաժանվելու է արտաքին կոմունիկացիաների /կոյուղի, հեղեղատար/ շինհրապարակի՝ ընդգրկելով հիմնականում Մոլդովական փողոցը, և ավտոկայանատեղիի, կաթսայատան, էլեկտրաենթակայանի և մնացած ենթակառուցվածքների շինհրապարակների:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների մոտեցումը շինհրապարակ նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Բագրևանդի, Ն.Սեփանյան և Մոլդովական փողոցներով: Հիմնական մուտքը շինհրապարակ կիրականացվի Բագրևանդի փողոցով, իսկ արտաքին կոյուղու և հեղեղատարի շինհրապարակին մոտենալու և աշխատելու համար՝ Մոլդովական փողոցով: Մնացած հիմնական աշխատանքը և տեղակայումը նախատեսվում է իրականացնել նոր կառուցվող ավտոկայանատեղիի և մնացած ենթակառուցվածքներին կից տարածքներում:

Շինարարության տարածքը կսահմանազատվի՝ ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից:

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների տեղակայման համար առաջարկվում է օգտագործել շինհրապարակի ազատ տարածքները:

Առաջարկվում է նախատեսել կոնստեյների տիպի հատուկ շինություններ՝ գրասենյակ, հանդերձարան, լվացարան, ինչպես նաև պահեստներ, բիոզուգարաններ, աղբի տարրաներ և այլն: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական

մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ դրանք վաճակալել այլ կազմակերպություններից:

Մինչ շինարարական աշխատանքներ սկսելը Կապալառուն պետք է ունենա անհրաժեշտ բոլոր համաձայնությունները, Երևանի Նոր Նորք վարչական տարածքի թաղապետարանի համապատասխան բաժինների կողմից՝ կապված գոյություն ունեցող կոմունիկացիաների, էլեկտրագծերի և գազատարի հետ հատման, շինարարական աղբի տեղափոխման, գործող ավտոճանապարհների տարածքում շինաշխատանքների իրականացման վերաբերյալ և այլն:

Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ և թույլատվությամբ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցից, որն պետք է ունենա չափաբաժին կշռող սարքավորումներ՝ ապահովելու համար նախագծում նախատեսված բետոնի դասը իր բոլոր ցուցանիշներով: Առաքումը նախատեսվում է իրականացնել մասնագիտացված տրանսպորտային միջոցներով և այնպիսի պարբերականությամբ, որպեսզի ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար խորհուրդ է տրվում օգտագործել Երևանի կամ հարակից մարզի շինարարական արդյունաբերության թերբեռնված հզորությունները:
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել ինչպես շինհրապարակում, այնպես էլ մեքենայացման բազայում:

Շինարարական հրապարակը (շին. հրապարակի կազմակերպման սխեման բերված է [հավելված 6](#)-ում) ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն կազմակերպվելու է բացառապես Ինժեներական քաղաքի վարչական տարածքի սահմաններում:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակը ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 28000 կգ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

6.2. Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ

Շինարարական մեքենա-մեխանիզմների և սարքավորումների տեսակները և տիպերը տրված են խորհրդատվական կարգով և կարող են ենթարկվել փոփոխության, ելնելով գոյություն ունեցող տեխնիկայի առկայությանից կամ ձեռքբերման հնարավորությունից, սակայն նրանք պետք է ունենան նույնատիպ տեխնիկական ցուցանիշներ:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկը ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ*

N	Մեքենա-մեխանիզմների անվանում	Մակնիշ/հզորություն	Քանակ, հատ
1	Ավտոինքնաթափ	10տ բեռնունակ.	3
2	Ավտոամբարձիչ	20տ բեռնատվ.	1
3	Ավտոամբարձիչ	16տ բեռնատվ.	1
4	Ավտոբետոնախառնիչ	տարողությունը 2մ ³	2
5	Ավտոբետոնապոմպ	10մ ³ /ժամ արտադրողականությամբ	1
6	Կոմպրեսոր	արտադր. 10մ ³ /ր	1
7	Հետահար մուրճ	ՄՕ-10	3
8	Բուլդոզեր	59կՎտ	1
9	Բուլդոզեր	96կՎտ	1
10	Էքսկավատոր	0.65մ ³ շերտի տարողությամբ	1
11	Ինքնագնաց զլդոն	առնվազն 6տ	1
12	Ձեռքի տոփիչ	40կգ	2
13	Ասֆալտատեղադրիչ մեխանիզմների լրակազմ	-	1
14	Զոդման ապարատ պողպատի համար	-	4
15	Զոդման ապարատ պոլիէթիլենի համար	-	4
16	Խորքային վիբրատոր	ԻՎ	4
17	Մակերևութային վիբրատոր	-	2

* մեքենաների և մեխանիզմների կազմը տրված են խորհրդատվական կարգով և կարող են փոխարինվել նույն տեխնիկական պարամետրեր ունեցող այլ մեքենաներով ու մեխանիզմներով

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և կազմում է 10 ամիս (տես՝ նկ. 1)՝ կիրառելով աշխատանքերի

համատեղման սկզբունքը, ներառյալ սեյսմիկայի գործակիցը, ինչպես նաև նախապատրաստական շրջանը 15օր: Աշխատանքերը տվյալ ժամանակահատվածում իրականացնելու համար հարկ կլինի մեկից ավել աշխատանքային բրիգադաների կիրառում:

№/Վ	Աշխատանքների անվանում	Չ ա հ. միավոր	Ծավալ	Նորմաներ, այլուսակներ	Մեքենա մեկանվագ	Բրիգադայի բաժանակը, հատ	Ժամանակահատվածի համար, մարտ/մայ, մեծնամ	Աշխատանքի տևողություն, օր	Աշխատանքի տևողություն, ամիս	Բանվորների քանակը, մարդ	Ե Դ Ե Մ Ո Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը									
											Ս Ս Ի Մ Ն Ե Բ									
											1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Նախագատրաստական շարժան / ներառյալ ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների տեղակայումը, ժամանակավոր ցանկապատի տեղադրումը/							15	0.5	6										
2	Մանրեցնող տեխնիկայի հանգույցի ժամանակավոր տեղակայում							10	0.4	4										
3	Պոլսբյուրն ունեցող կիսաբանոց բետոնե շինությունների և շենքերի ապամոնտաժ / քանդում/				հիդրոմբոն, հետահար մուկոն			20	0.80	4										
4	Տարածքի համահարթեցման աշխատանքներ	մ ³	14745	ՇՆԱԿ IV-2-82, 1-52	բուկրոզեր	1	0.01769	37.3	1.49	2										
5	Սվտկայանատեղ 118 մեքենայի համար, ներառյալ կոմու միկային աշխատանքները	մեք	118	ՇՆԱԿ 1.04 03 -85, մաս 4, կետ 5	Էքսկավատոր, բուկրոզեր, ակտուկոննիկ	1			8.4	30										
6	Տրատար / արտաքին, ներքին, ոռոգման/	մ	3493.4	ՇՆԱԿ IV-2-82, 22-8	մոնտաժմիկ	2	0.245	61.1	2.45	6										
7	Կաթիլային ոռոգման ցանց	մ	6975	ՇՆԱԿ IV-2-82, 22-8, կիրառելի	մոնտաժմիկ	1	0.0959	95.6	3.82	6										
8	Ուղղակար	մ	645	ՇՆԱԿ IV-2-82, 22-8, կիրառելի	մոնտաժմիկ	1	0.119	11.0	0.44	4										
9	Կոյուղի, ներառյալ անձրևաջրերի կոյուղին	մ	4048	ՇՆԱԿ IV-2-82, 23-5, կիրառելի	մոնտաժմիկ	1	0.22967	132.8	5.31	4										
10	Բետոնե հենակառույցի կառուցում	մ ³	389.4	E3-1	մոնտաժմիկ, բետոնադրոն	1	1.2	66.7543	2.67	4										
11	Պոմպակայան	լրակ	1	ՇՆԱԿ 1.04 03-85					5	6										
12	Ենթակայան	լրակ	1	ՇՆԱԿ 1.04 03-85					3	6										
13	Էլեկտրատեղմիկայան աշխատանքներ			կիրառելի					7	6										
14	Սլա աշխատանքներ / ցանկապատ, մայրեր և այլն/			կիրառելի					5	7										
15	Բարեկարգման աշխատանքներ / ամրոցակայան լրակագն	լրակ		կիրառելի					4	6										
16	Տարածքի մաքրում կարգաբերում								0.5	4										

1. Ընդարարության տևողությունը հաշվարկված է ըստ գործող ՇՆԱԿ 1.04 03-85, ՇՆԱԿ IV-2-82 և, EHIIP:

Սկար 1. Ծինարարության տևողության ժամանակացույց

Ծինարարական աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Ծինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխղեկի կողմից:

Ծինարարության ընթացքում պահանջվող աշխատողների առավելագույն թիվը գնահատվում է 75 մարդ, որից.

- բանվորներ` 73 մարդ (ներառյալ` օժանդակ տնտեսությունները):
- ինժիներատեխնիկական անձնակազմ` 2 մարդ:

6.3. Հողային աշխատանքներ, օգտագործվող բնառեսուրսներ

Հողային աշխատանքներ: Ծինարարական աշխատանքների արդյունքում` համաձայն նախագծով մշակված կտրվածքների, կստացվի 2050մ³ հողային հանույթ, որից 1120մ³ գրունտի հանույթն է (որն ամբողջովին օգտագործվելու է էտլիցքի համար), իսկ 930մ³ բուսահողը (որը կուտակվելու է շինհրապարակում նախատեսված համապատասխան հարթակում` կանաչապատման աշխատանքներում օգտագործելու նպատակով): Բուսահողի շերտի հզորությունը կազմում է 10 սմ, որը կկուտակվի տարածքում համապատասխան հարթակի վրա`

կծածվի ջրամեկուսիչ թաղանթով և կպահպանվի հետագայում գազոնների և այլ կանաչապատ մակերեսների կառուցման համար:

Առաջացած թափոններ: Նախատեսվող գործունեության ժամանակ առաջացող թափոնները հիմնականում 4-րդ և 5-րդ դասի են (համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի) և իրենցից ներկայացնում են, շինարարության խառը թափոններ (3990130001005), ոչ պիտանի հանույթը և հողային աշխատանքների դեպքում հողային, ավազային շլամը (3160250004004), ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավված անձնակազմի կողմից առաջացրած կենցաղային աղբը:

Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 2800 կգ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Բնառեսուրսների օգտագործում: Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Որպես կանոն, բնակավայրերում իրականացվող շինարարության ժամանակ ժամանակավոր ջրամատակարարման ջրի հիմնական աղբյուր է ծառայում համայնքային ջրամատակարարման ցանցը, իսկ շինհրապարակի համար կապալառուի կողմից նախագծվում (շինարարության արտադրության նախագիծ՝ ՍՍՍ) և կառուցվում է մեկ համակարգային ժամանակավոր ջրամատակարարման ցանց, որը շինարարության ողջ ընթացքում ապահովվելու է անհրաժեշտ ջրապահանջը: Այդ նախագծում ներառվելու են ջրի մատակարարման ձևը, եղանակը, միացման աղբյուրը (կետը և ձևը), ժամանակավոր ջրագծի տրամագիծը և այլ ուղեկից հարցերի լուծումները:

Շինարարական հոսքաջրերի հեռացման վայրը, ձևը, եղանակը կորոշվի կապալառուի կողմից՝ շինարարության արտադրության նախագիծի սահմաններում:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է.

- հողային աշխատանքների ընթացքում տարածքի ջրցանման/փոշենստեցման, հողի/գրունտի խոնավացման համար,
- անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների նպատակով:

Հաշվի առնելով, որ միաժամանակ շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը կազմում է մոտ 30000մ², ջրցանի հաշվարկն իրականացվել է տարածքի այդ չափի համար.

$$Մ1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ}$$

S1 - ջրվող տարածքի մակերես, 30000 մ²,

K1 - 1 մ² օրական ջրցանի նորմ, 0.0015 մ³ (կամ 1.5լ/մ²), տաք եղանակի պայմաններում ջրցան իրականացվում է օրական 2 անգամ:

T - հողային աշխատանքների օրերի քանակ, 22 օր:

Հետևապես ջրցանի ջրապահանջը կկազմի.

$$U1 = 30000 \times 2 \times 0.0015 \times 22 = 1980 \text{ մ}^3$$

Աշխատակիցների և բանվորների խմելու և կենցաղային պահանջների համար ջրապահանջը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N \times + n1 \times N1) T1, \text{ որտեղ}$$

n - ԻՏ աշխատողների թվաքանակ, 2 մարդ

N - ԻՏԱ ջրածախսի նորմատիվ, 0.016 մ³օր/մարդ

T1 - շինարարության ողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի թիվ, 220 օր

n1- բանվորների (այդ թվում՝ օժանդակ տնտեսություններ) թվաքանակ, 75 մարդ

N1 - բանվորների ջրածախսի նորմատիվ, 0.025 մ³օր/մարդ

$$W_{\text{խ.տ.}} = (2 \times 0.016 + 73 \times 0.025) \times 220 = 408.54 \text{ մ}^3$$

$$\text{Ընդահանուր ջրապահանջը կկազմի՝ } 1980 \text{ մ}^3 + 408.54 \text{ մ}^3 = \mathbf{2388.54 \text{ մ}^3}$$

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում և ըստ անհրաժեշտության այլ լրացուցիչ պայմանների ապահովումը կարող է իրականացվել հետագայում:

Շին. հրապարակը նախատեսվում է ապահովել բիզնեսարաններով, որոնց տեղադրումը, շահագործումն ու ապամոնտաժը կիրականացվի արտադրող կազմակերպության սերտիֆիկատների և նորմատիվների հիման վրա:

4.2.1. Աշխատանքների իրականացման անվտանգության տեխնիկա

Վթարային իրավիճակների, վնասվածքների, հիվանդությունների առաջացման աղբյուր է հանդիսանում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը, որոնցից խուսափելու համար անհրաժեշտ է հետևել ստորև բերվող անհրաժեշտ միջոցառումներին:

Աղյուսակ 4. Անվտանգության նախազգուշական միջոցառումները ե/բ կոնստրուկցիաների բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ:

Խախտման հնարավոր հետևանքները	Խախտման պատճառը	Խախտման նախազգուշական միջոցառումները
Դարսակի քանդվում, ամբարձիչի ընկնում	Պահեստավորման տեղամասի չպատրաստված հիմք	Հիմքի պատրաստում 3 ⁰ -ից ոչ ավել թեքությամբ, հիմքի խտացում, կամ ինվենտար սալերի տեղադրում, միջադիրների տեղադրում հենարանների տակ
Ամբարձիչի ընկնում,	Ամբարձիչի բեռնունակության	Բեռնունակության սահմանիչի

ճուրայանների կտրում, արգելակների խափանում	գերազանցում	տեղադրում, բեռի քաշի ստուգում
Ոչ ճիշտ առասանում (строповка) և կոնստրուկցիայի տեղադրում, վնասվածքներ բռնիչ սարքերից, կարճատեսության նշաններ	Աշխատանքային զոնայի թույլ լուսավորում	Լրացուցիչ լուսավորման սարքերի տեղադրում, աշխատանքային զոնայի լուսավորության համար
Կոնստրուկցիաների խփում տրանսպորտին կամ դարսակին, ճուրայանի լարում	Նախագուշակյան ազդանշանների ոչ ճիշտ մատուցում	Առասանիչ բանվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա
Ամբարձիչի ժամանակից շուտ մաշում	Ամբարձիչի աշխատանքի ռեժիմի անհամապատասխանություն նրա օգտագործման պայմաններին (ամբարձիչի օգտագործում ավելի ծանր պայմաններում, քան տրված է անձնագրում): Չնախատեսված աշխատանքային շարժումների համատեղում	Ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար ստուգում: Ամբարձիչի կոնստրուկցիային մանրակրկիտ ուսումնասիրություն
Էլեկտրական տրավմաներ	Աշխատանք էլեկտրական գծերի մոտ առանց թույլատվության (наряд-допуск), ԷԳ և ամբարձիչի, պահեստի հեռավորության գերազանցում	ԷԳ և ամբարձիչի, պահեստի թույլատրելի հեռավորության պահպանում
Տեղափոխվող կոնստրուկցիայից, առասանման սարքից վնասվածքներ	Ձայնային ազդանշանի բացակայում, նախագուշակյան ազդանշանի ոչ ճիշտ մատուցում	Ազդանշանի պարբերաբար ստուգում, նրա աշխատանքի անսարքության վերացում: Առասանող բանվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա
	Որակագրված և մաշված բեռաբռնիչ սարքերի օգտագործում	Բեռաբռնիչ սարքերի պարբերաբար տեխնիկական վերահաստատում
Ամբարձիչով վրաերթ բանվորների վրա, ամբարձիչի պտտվող մասերով բանվորների վնասում	Աշխատանքների կազմակերպման նախագծով (ԱԿՆ) հաս-տատված տեղաշարժման ուղեգծի շեղում, նյութերի և կոնստրուկցիաների տեղադրում տրանսպորտի և բեռնաբառձիչ մեխանիզմների ուղեգծի վրա: Ամբարձիչի և կառույցի միջև թույլատրելի հեռավորության գերազանցում	Աշխատանքների իրակա-նացում համաձայն ԱԿՆ, ազդանշանային սարքի ստուգում և անսարքության վերացում: Թույլատրելի հեռավորության, ոչ պա-կաս քան 1մ, պահպանում
Բանվորի ժամանակից շուտ հոգնածություն, գլխապտույտ և փսխում	Աշխատանքների իրականացում այն զոնաներում, որտեղ նորմաներից գերազանցում են աղմուկը, վիբրացիան, գազերի առկայությունը, աշխատանքային զոնայի տեսադաշտի բացակայում	Աղմուկի, վիբրացիայի, գազավորման թույլատրելի նորմերի պահպանում, աշխատանքային զոնայի տեսադաշտի ապահովում
Մրսածության հիվանդություններ և ցրտահարում	Նորմաներով սահմանված ջերմաստիճանից ցածր պայմաններում աշխատանք	Աշխատանքի դադարեցում, տաքացվող տնակի տեղադրում

Եթե շինարարության հրապարակում առկա են էլեկտրահաղորդիչ գծեր, ապա ամբարձիչը պետք է տեղակայվի 30մ-ից ոչ մոտիկ, ծայրամասային էլ.հաղորդիչ լարից: Եթե անհրաժեշտություն կա աշխատել 30մ-ից պակաս հեռավորության վրա,

պետք է ձևակերպել կարգագիր - թույլտվություն, որտեղ նշվում են այդ աշխատանքի անվնաս պայմանները:

Բեռնաբարձիչի, տվյալ դեպքում ամբարձիչի, գործնության զոնայում չպետք է լինեն խոտանված բռնիչ սարքեր:

Առասանման եղանակները և ձևերը որոշվում են նախապես, առասանման գրաֆիկական նկարագրությունը տրվում է առասանիչ բանվորներին, մեքենավարներին և կախվում է ամբարձիչի մոտակայքում տեսանելի վայրում

Ամբարձիչի պտտվող պլատֆորմի և տրանսպորտային միջոցի կամ կառույցի կողային մասի նվազագույն հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս քան 1մ: Տվյալ դեպքում նվազագույն հեռավորությունը 1մ է:

Ամբարձիչի սլաքի բլոկի և կեռիկի սարքի միջև (между блоком стрелы и крюковой обоймой) նվազագույն հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս, քան 0,5մ:

Ամբարձիչով տեղափոխվող էլեմենտները պետք է ճանապարհին հանդիպող առականերից բարձր լինեն 0,5մ: Թույլ չի տրվում տեղափոխվող էլեմենտը հենել ցանկապատին:

Բարձրացվող էլեմենտի քաշը չպետք է գերազանցի ամբարձիչի բեռնունակությունը սլաքի տվյալ թռիչքի դեպքում:

Արգելվում է տեղափոխել բեռներ, որոնց քաշը անհայտ է:

Բեռի բարձրացման կամ իջեցման ժամանակ թույլ չի տրվում բեռնման ճոպանի քաշում:

Թույլ չի տրվում բեռը թողնել ամբարձիչից կախված վիճակում աշխատանքի դադարի ժամանակ:

Առասանման եղանակները պետք է բացառեն վերնաշխատանքները (верхолозные работы) բեռը առասանից ազատելու համար:

Թույլ չի տրվում կատարել բեռնավորման և բեռնաթափման աշխատանքներ, եթե վարորդը գտնվում է մեքենայի մեջ:

Առասանման աշխատանքներին թույլ չեն տրվում այն բանվորները, որոնք չունեն առասանման թույլտվություն:

Եթե ամբարձիչի սպասարկման գոտին լիովին տեսանելի չէ ամբարձիչի մեքենավարի խցիկից /կաբինայից/, առասանիչ բանվորի ազդանշանների հաղորդման համար լրացուցիչ նշանակվում է ազդանշան հաղորդող բանվոր:

Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը, եթե հայտնաբերվում են ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճոպանի կտրվածք, արգելակման խախտումներ և այլն:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 5°:

Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման–բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին:

Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՇՆԿ III-4-80* «Անվտանգության տեխնիկական շինարարության մեջ»:

Բոլոր անհրաժեշտ միջոցները կապված շրջակա միջավայրի պահպանության հետ, պետք է իրականացվեն Կապալառուի կողմից, համաձայն իրավասու մարմինների կարգադրությունների և ճարտարագետի հրահանգների:

Աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները և առավելագույնս պահպանվի բնական լանդշաֆտը:

1. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում սահմանված սոցիալական ռիսկերի մեղմացման միջոցառումների իրականացում:
2. Կապալառուի օժանդակ կառուցվածքների՝ պահեստներ, պահեստային հրապարակներ և այլն, տեղակայում հնարավորինս շինհրապարակի սահմաններում:
3. Ծառերի և շինությունների հեռացումից խուսափում, այդպիսի աշխատանքների իրականացում միայն խիստ անհրաժեշտության դեպքում և միայն Պատվիրատուի թույլտվությունը ստանալուց հետո:
4. Շինարարական աշխատանքների իրականացում օրվա բնականոն ժամերին՝ այլապես խլացուցիչների տեղադրում:
5. Ժամանակավոր օգտագործած հողերի վերականգնում նախնական տեսքին:
6. Շինհրապարակի մաքրում և կարգի բերում, ինչպես նաև շինարարությունում աշխատող բանվորների սանիտարական պայմանների ապահովում:
7. Շինարարության մեջ աշխատողների (բանվորների) հիմնական քանակի ներգրավում մոտակա բնակավայրերից, խրախուսելով կանանց, երիտասարդների և խոցելի խմբերի ներկայացուցիչների (ընտանեկան նպաստ ստացողներ, միայնակ կանայք՝ տնտեսության ղեկավարներ, թոշակառուներ և այլն) ներգրավումը: Բանվորների մնացած մասի (եթե այդպիսիք կան) տեղավորում մոտակա բնակավայրերում և մասնագիտացված շարժական շինություններում, որոնք ապահովված կլինեն ջրով և կոյուղով:
8. Շինարարության մեջ աշխատողների պարբերական հրահանգավորումների իրականացում տեխնիկական անվտանգության հարցերով:
9. Շինարարական աշխատանքների ավարտից հետո վերականգնման աշխատանքների իրականացում, տարածքի բարեկարգում, ներառյալ՝ էսթետիկ տեսքը:
10. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Բագրևանդի 74 հասցեում և իրենից ներկայացնում է չկառուցապատված տարածք: Տարածքի արևելյան կողմով անցնում է Բագրևանդ փողոցը, հարավային կողմով՝ Ն.Ստեփանյանի փողոցը, հյուսիսային կողմում տեղակայված են բնակելի բարձրահարկ շենքեր, իսկ արևմտյան կողմում տարբեր կառույցներ:

Ուսումնասիրվող տեղամասում ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1366-1377 մ սահմաններում:

Կլիմա: Ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս բերվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևան քաղաքում, ուստի բերված են նրա համապատասխան կլիմայական ցուցանիշները: Երևան քաղաքը գտնվում է չոր ցամաքային կլիմայական պայմաններում, չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով: Ձմեռը սկսվում է սովորաբար նոյեմբերի II տասնօրյակում և ավարտվում մարտի վերջին: Ձմեռը չափավոր ցուրտ է, ոչ երկարատև, կայուն ձյան ծածկույթ լինում է ոչ ամեն տարի: Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 24-25°C, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 61% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -2,9°C է, հարաբերական խոնավությունը 77% (ժ.15-ին), թույլ քամիները 2-3մ/վրկ արագությամբ:

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0.7 մ: Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 25մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ: Ձյան նորմատիվային ճնշումը՝ 70կգու/մ² է:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում են որոշ կլիմայական տվյալներ (http://www.mud.am/lows/files/26_10_11_h.pdf)՝ ըստ Երևանի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Աղյուսակ 5. Օդի ջերմաստիճանն՝ ըստ Երևանի օդերևութաբանական կայանի դիտարկումների, °C

Բնակավայր	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Երևան	1090	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41

Աղյուսակ 6. Օդի հարաբերական խոնավությունն՝ ըստ Երևանի օդերևութաբանական կայանի դիտարկումների, %

Բնակավայր	Օդի հարաբերական խոնավություն, %												Միջին տարեկան	Միջինը ժամը 15-ին	
	Ըստ ամիսների											61		Ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Երևան	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI		XII	61	69
		77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76		

Աղյուսակ 7. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթն՝ ըստ Երևանի օդերևութաբանական կայանի դիտարկումների

Բնակավայր	Տեղումների միջին ամսական քանակը, մմ օրական առավելագույն՝ ըստ ամիսների												Չյան ծածկույթը			
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարեկան	10-օրյա max., սմ	Օրերի թիվ	Ջրի max. քանակը ձյան մեջ, մմ
Երևան	28 22	31 28	38 26	48 34	55 47	29 47	16 34	8 22	11 47	31 34	30 30	28 26	353 47	50	53	152

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքն իրենից ներկայացնում է էյուվիալ-դեյուվիալ հրաբխային փոքրաթեք լանջ, անկումով դեպի հարավարևելք (մինչև 5°-ի չափով): Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են (բուն ինժեներական քաղաքի, առանց կոմունիկացիաների) 1365.0-1378.0մ սահմաններում: Ռելիեֆի վրա առկա են փոքր թմբեր, ձորականման տեղամասեր, փոքր գոգավորություններ և այլն:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են Նորքի հրաբխային սարահարթի հյուսիսարևելյան տարածքները, հասնելով մինչև Ջրվեժ գյուղի մերձակայքը: Տեղ-տեղ մերկանում են, տեղ-տեղ ծածկված են ժամանակակից էյուվիալ-դեյուվիալ առաջացումների ոչ մեծ հզորության կուտակումներով: Այստեղ պլիոցենի հասակի մերկացող բազալտները ներկայացված են մի քանի հոսքերով, իրարից ոչ շատ տարբեր բազալտի տարատեսակներով և նրանց պիրոկլաստիկ արտանետումներով:

Էկոգեն երկրաբանական երևույթներից տարածքում դիտվում է մակերեսային էոզոլիա և ջրոդոդում՝ մթնոլորտային տեղումներից, իսկ վտանգավոր այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ կարստը, սողանքները, քարաթափությունը, փլուզումները և այլն, տարածքում բացակայում են:

Երկրաբանալիթոլոգիական կառուցվածք: «Գեոլիթ» ՄՊԸ-ի կողմից իրականացվել է տարածքի ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի տվյալների, ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային հոսքերը՝ բազալտները, որոնց ծածկում են էյուվիալ-դեյուվիալ և ժամանակակից տեխնածին առաջացումները:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում վերնից-ներքև մասնակցում են հետևյալ շերտերը (հաշվի չի առնված մինչև 0.2 մ հզորությամբ հողաբուսական շերտը).

- Շերտ-1** Սպիտակահողեր (կարբոնատային շերտ) դեղնասպիտակագույն, սակավ խոնավ, փխրուն, տեղ-տեղ ցեմենտացած, խճաքարի և ավազների տեսքով: Ունի լայն տարածում: Շերտի հորատված հզորությունը 0.9-1.0 մ է: Ժամանակակից էյուրվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-5-82-ի Ժ1§33⁹ III կարգ է (պայմանական):
- Շերտ-2** Խճային գրունտ, մանրաբեկորների պարունակությամբ, կավավազային լցոնի 10-20% պարունակությամբ: Գրունտը սակավ խոնավ է: Բեկորները բազալտային կազմի են, իսկ լցոնը՝ շագանակագույն, պինդ թանձրության և խիտ: Շերտն ունի մասնակի տարածում: Հորատված հզորությունը 1.0-2.1 մետր է: Չորրորդական ժամանակաշրջանի էյուրվիալ-դեյուրվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-5-82-ի Ժ1§13 կարգ է:
- Շերտ-3** Բազալտներ մոխրագույն, թույլ ծակոտկեն, հոծ, տեղ-տեղ ծակոտկեն ու խոռոչավոր, բեկորային անջատումներով, կարծր: Շերտում հնարավոր են խարամների ոչ մեծ հզորության ոսպնյակաձև, գնդաձև ներփակումներ և ենթաշերտեր: Շերտը համատարած է: Հորատված առավելագույն հզորությունը 8.6 մ է (ՀԱ-2): Նեոգենի ժամանակաշրջանի վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-5-82-ի Ժ1§19 VII կարգ է:
- Շերտ-4** Խարամներ կարմրավուն և վարդագույն, ծակոտկեն և խոռոչավոր, ավազային և խճային կառուցվածքի, բազալտների խճի պարունակությամբ: Շերտն ունի մասնակի տարածում: Հորատված առավելագույն հզորությունը 1.8 մ է: Նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՇՆևԿ IV-5-82-ի Ժ1§40¹ III կարգ է:

Գործունեությունը նախատեսվում է իրականացնել Ինժեներական քաղաքի համար նախատեսված հողատարածքում, որտեղ համաձայն ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների (իրականացվել են 2020թ. «Գեոլիթ» ՍՊԸ-ի կողմից, ներկայացված է սույն հաշվետվությանը կից) արդյունքների, տեղանքի ընդհանուր ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքների իրականացման համար:

«Գեոլիթ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությունում նշվում է, որ տվյալ տարածքում կառույցների աշխատանքային նախագծի համար անրաժեշտ է կատարել յուրաքանչյուր կառույցի տեղամասի մանրամասն ինժեներաերկրաբանական հետազոտություններ: Ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների աշխատանքային նախագծի ժամանակ ՀԳՇՆ ՍՊԸ-ի կողմից այդ աշխատանքները

մանրամասն իրականացվել են (ինժեներական կոմունիկացիաների ուղեգծերում և կառույցներում ՀԳՇՆ ՄՊԸ-ի կողմից իրականացված ինժեներատեխնիկական ուսումնասիրությունների հաշվետվությանը ներկայացվում է կից):

5.2 Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Նախագիծն իրականացվել է համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմեր»-ի պահանջների, համաձայն որի նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 2-րդ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացումների մեծությունը կազմում է $A=0.4g$:

5.3 Օդային ավազան

Երևան քաղաքում օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օդոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան: Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի տվյալների համաձայն (<http://armmonitoring.am/page/5>), Երևան քաղաքում ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ն: Որոշակի չնչի աճ նկատվել է կապված փոշու կոնցենտրացիայի հետ, որը կարող է պայմանավորված լինել տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:

5.4 Բուսական և կենդանական աշխարհ

Ծրագրի իրականացման տարածքը տեղակայված է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում: Տեղանքը գտնվում է զարգացած քաղաքային միջավայրում, և բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել Ինժեներական քաղաքի համար նախատեսված հողմասի կադաստրային սահմաններում:

Տվյալ տարածքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները:


Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ նախատեսվում է 930մ³ ծավալով հողաբուսաշերտի (հզորությունը՝ մինչև 10սմ) հեռացում և ժամանակավոր պահեստավորում՝ հետագայում տարածքի կանաչապատման աշխատանքների ժամանակ օգտագործելու նպատակով: Հանված ծավալը հետագայում ամբողջովին նախատեսվում է օգտագործել Ինժեներական քաղաքի

տարածքի բարեկարգման և կանաչ գոտու իրականացման համար, որի նախագծային աշխատանքներն իրականացվել են այլ խորհրդատուի՝ «Ստորակետ» ճարտարապետական ստուդիայի կողմից:

Ստորն ներկայացվում է «Ստորակետ» ճարտարապետական ստուդիայի կողմից իրականացված կանաչապատման սխեման (տես՝ նկ. 2), որը տվյալ կազմակերպության կողմից ներկայացվել է Երևանի քաղաքապետարանի հաստատմանը:

Ինժեներական ենթակառուցվածքների իրականացման աշխատանքների ժամանակ հողաբուսաշերտի հանումը, պահպանումն ու հետագա օգտագործումը կիրականացվի ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ի N1396-Ն և 2017թ. 1404-ն որոշումներով սահմանված պահանջների համաձայն:

Նկար 2. «Ստորակետ» ճարտարապետական ստուդիայի կողմից Ինժեներական քաղաքի համար իրականացված կանաչապատման սխեման



5.5 Ջրային ռեսուրսներ

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Համաձայն ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության արդյունքների, նախատեսվող գործունեության տարածքում փորված հորատանցքերով գրունտային

ջրեր չեն բացահայտվել: Ըստ արխիվային նյութերի գրունտային ջրերը տեղակայված են 70 մետրից ավել խորություններում:

5.6 Հողօգտագործում

Ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի (վկայականը բերված է [հավելված 1](#)-ում) կառուցապատվող տարածքը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը, որի համար առկա է Երևանի քաղաքապետարանի կողմից 25.01.2021թ. տրված N01/18-07/1-Խ-3954-13 նախագծման թույլտվությունը (բերված է [հավելված 3](#)-ում):

Շինարարական աշխատանքների ժամանակ հանվող **հողաբուսաշերտը (930 մ³ հզորությունը՝ 10 սմ)** նունպես նախատեսվում է կուտակել և հետագայում օգտագործել կանաչ տարածքների բարեկարգման աշխատանքների համար:

Մինչ այդ հողաբուսաշերտը պետք է պահպանվի կույտերով, որոնց բարձրությունը և ձևը պետք է բացառեն դրանց էրոզիան: Միջազգային լավագույն փորձից ելնելով, հողաբուսաշերտի պահպանման համար սովորաբար օգտագործվում են 2 մ բարձրությամբ կույտեր՝ կողային շեպի 1:2 (25°) առավելագույն թեքությամբ:

Հողաբուսաշերտը պետք է պահպանվի այնպիսի տարածքում, որտեղ այն կարող է մնալ անխախտ վիճակում՝ չխանգարելով տվյալ տեղանքի գործունեությանը: Հողաբուսաշերտի պահման համար օգտագործվող տարածքը կարող է լինել ինչպես շինհրապարակի տարածքում, այնպես էլ նրանից դուրս: Պետք է ապահովվի, որպեսզի տվյալ տարածքը/տեղամասը լինի մաքուր բուսականությունից և շինարարությունից առաջացող ցանկացած թափոններից, որտեղ կբացառվեն էրոզիոն ցանկացած գործընթացները:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պարկտիկայի արդյունքում:

Նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվում են բնակավայրի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

▪ ***Օդի աղտոտում***

Ծրագրի իրականացման ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներով: Հորատման (առանց պայթեցումների), բեռնման և թափոնակույտման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ:

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K6 \times B \times G \times 10^6 / 3600 \text{ (գ/վ), որտեղ՝}$$

- K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05
- K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աերոզոլային մասնիկների, 0.02
- K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.2
- K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1
- K5 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4
- K6 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1
- B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6
- G -ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է 2ամիս կամ

$$2\text{ամիս} \times 22 \text{ օր} \times 8 \text{ ժամ} = 352 \text{ ժամ/շինարարություն:}$$

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է $G=2050\text{մ}^3:352 = 5.82 \text{ մ}^3/\text{ժամ}$ կամ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $5.82 \text{ մ}^3/\text{ժամ} \times 1.7 \text{ տ/մ}^3 = 9.9 \text{ տ/ժամ}$:

$$Q = 0.05 \times 0.02 \times 1.2 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 9.9 \times 10^6 / 3600 = 0.08 \text{ գ/վրկ}$$

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$$0.08 \text{ գ/վ} \times 352 \text{ ժ/շ} \times 3600 \text{ վ/10}^6 = 0,1 \text{ տ/շին. ժամանակահատված}$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Թույլատրված նորմերի սահմաններում ներկայացված արտանետումների պահումը և հնարավոր վնասակար ազդեցությունները կբացատրվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում (տես՝ ԲԿՊ),

մասնավորապես փոշու արտանետումները նվազենելու համար կիրականացվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափեխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին. հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

▪ **Աղմուկի և թրթռումների ազդեցություն**

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում /տես՝ ԲԿՊ/ Ինժեներական քաղաքի հարակից տարածքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը չի գերազանցի ՀՀ-ի սահմանված նորմերը: Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ:

▪ **Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Մակերևութային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները, իսկ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ:

Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ է հասցվելու տարածքում գոյություն ունեցող քաղաքային ջրագծից:

▪ **Թափոնների և այլ նյութերի կառավարումը**

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա ինժեներական ենթակառուցվածքների իրականացման/կառուցման ընթացքում, շինարարական աղբն է, որի տեղափոխությունն ու տեղադրումը կիրականացվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայրում:

▪ **Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի (տես՝ ԲԿՊ):

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, ինչպես նաև ՀԲ բնապահպանական և անվտանգության սկզբունքներին նախատեսվում է ապահովել, բնապահպանական կառավարման և պլանի (ԲԿՊ) համաձայն: ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Բնապահպանական կառավարման ([հավելված 7](#)) և մոնիտորինգի պլաններն ([հավելված 8](#)) ընդգրկվելու են ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու են հիմնական կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

Ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների իրականացման գործունեության շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված միջոցառումների գումարային ծախսերը գնահատվում են մոտ **21 մլն**. ՀՀ դրամ, որը ներառում է նաև մշտադիտարկման ծախսերը:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

Տեխնիկական վերահսկողը պետք է իրականացնի ամենօրյա հսկողություն, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողը պարտավոր է ժամանակին տեղեկացնելու Պատվիրատուն («Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ) նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն իրականացնել այն դեպքերում, եթե բողոքների գրանցամատյանում լինեն ազդակիրների կողմից համապատասխան բնույթի գանգատներ:

Ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների իրականացման համար նախանշված բոլոր աշխատանքները և ԲԿՊ-ի մեղմացնող միջոցառումների կատարումն ու դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ կողմից ևս կիրականացվի կանոնավոր մոնիտորինգ:

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ և ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի շրջանակներում շահառու և ազդակիր հանրությունն իրազեկվել է նախատեսվող աշխատանքների բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ: Հանդիպումը կայացել է 2021թ. ապրիլի 20-ին՝ ժամը 11:30-ին, Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի նստավայրում (ք. Երևան, Գայի պողոտա 19): Հանդիպմանը մասնակցել են համայնքի բնակիչներ, ներկայացուցիչներ Երևանի քաղաքապետարանից, Նոր Նորքի թաղապետարանից, Պատվիրատու և նախագծային ընկերություններից (ընդամենը՝ 10 մասնակից): Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021թ. ապրիլի 7-ի համարում: Հանդիպման արձանագրությունը և մասնակիցների ցանկը բերված են [հավելված 11](#)-ում:

Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 7 օր առաջ հանդիպման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը եղել է հասանելի հանրության համար:

Նախատեսվող գործունեության իրականացման ողջ ընթացքում ներդրվելու է բողոքների անձագանքման մեխանիզմ՝ (ԲԱՄ), իսկ բողոքները գրանցվելու են, որի գրանցման ձևաթղթի տարբերակը բերված է [հավելված 9](#)-ում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. հունիսի 21:
- ԱԶԲ 2015, Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- <http://xn--80aajzhcnfck0a.xn--p1ai/PublicDocuments/1310049.pdf>
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիանների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- www.arlis.am
- www.atdf.am

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «5» Ապրիլի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Լոր-Նորջ Բազրևանդի փողոց 74 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՍՎՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Նվիրատվության պայմանագիր 01.04.2019թ. թիվ 2752

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-008-0506-0108

Մակերեսի չափը (հա)՝ 3

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Հողամասում առկա է անավարտ շինություն:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Նախշուն Միսկարյան

Գրադեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ



ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ



Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԴԱՔ)
N 01118-0711-ԿԵ-3554-13 «25» «01» 2021թ.

Table with 2 columns: Question (e.g., 1. Հողամասը գտնվում է, 2. (*) Հողամասի չափերը, 3. Հողամասի անվանումը) and Answer (e.g., ՄԱԽԱԳԾՎՈՐ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, Մեծ փողով «Աշխարհային նախագիծ» կամ Երկու փողով «Աշխարհային փառաբարձը»):

Table with 2 columns: Question (e.g., 10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանակը, 11. Ստորգետնյա, կիսանտրոլի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները) and Answer (e.g., Նախարանի կայանարդիների, քիմիկական և օժանդակ սպասարձան սենյակի համար, Նախագծի ինժեներական մասը մշակել էր կառուցվածքային լուծումը ցրված փեխերկական պայմաններին համապատասխան):

Handwritten signatures and official stamps of the Urban Planning Department, including the name 'Արտուրյան' and the date '11.09.2017'.

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. ՎԵՈՒԻՍ ՋՈՒՐ



Ջուր

« 14 » Տեպր 2020թ.
N 101/3443

Ա. Մարտիրոսյան
Մ. Շահինյան
Ջեռարկությունների ինժեներատոր հիմնադրամ
տնօրեն Բ. Ենգիբարյանին
/հասցեն՝ ք. Երևան, Բազրկանդի 21/1/

Առարկան՝ Տեխնիկական պայմանի տրամադրում
Հարգելի պարոն Ենգիբարյան,

Ի պատասխան Ձեր դիմումի՝ ներկայացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից մշակված ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմանը ԱՐ/1135/2020/։ Դրա հիման վրա անհրաժեշտ է համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունում պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի առևլազն 2 փաթեթ՝ և մյուս կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների հետ համաձայնեցնելուց հետո, այն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից հաստատելու և միացման նախահաշիվ տրանսլու նպատակով, ներկայացնել ընկերության Շահագործման տնօրինություն՝ հետևյալ հասցեներից որևէ մեկով.

- 1. ք. Երևան, Բենակիրների 85/1
 - 2. ք. Վայք, Շինարարների 15
- Հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերի 1 բնօրինակ փաթեթը պահվելու է ընկերությունում:

Տեղեկացնում եմ նաև, որ նոր համակարգի կառուցման աշխատանքները սկսելուց առաջ հարկավոր է այդ մասին տեղեկացնել 1-85, 011 300185 հեռախոսակենտրոնի միջոցով: Հողային աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման մարմնից ստանալ շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն: Նոր համակարգի կառուցման տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով հարկավոր է դիմել 22 կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու համար լիցենզավորված կազմակերպության, որոնց ցանկը նրապարակված է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության պաշտոնական կայքում, օգտվել վերջինիս ծառայություններից և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն ներկայացնել կառուցված օբյեկտի վերաբերյալ կից ցանկում նշված փաստաթղթերը՝ ընկերության կողմից միացման աշխատանքներ կատարելու, առևտրային հաշվառքի սարք տեղակայելու և Ջեզ հետ Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելու համար:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում նշել, որ կառուցված նոր համակարգի սեփականության իրավունքի Հայաստանի Հանրապետության անհատույց հանձնումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առդիր 2 թերթ:
Հարգանքով՝ *Մ. Շահինյան* Գլխավոր տնօրեն
Մ. Շահինյան

Պատասխանատու՝
Լ. Մարտիրոսյան
Մարտիրոսյան

ՀԳ, ք. Երևան, 375025, Արվանակ 66ա
Ֆեմ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Էլ. փոստ՝ office@vjur.am
Վեբ-էջ՝ www.veolia.am

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ «ՎԵՈՒՎԱՅՐ» ՓԲԸ
Ն.Լ.Ք.Ց. 5713
Ն.Լ.Ք.Ց. 14 / 03
Պ.Ա. Երևան, 375025, Ստ. Արվանակ 66ա
Տեղ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Է-մեյլ: office@vjur.am
Վեբ-էջ: www.veolia.am
ՄՈՒՏԲ ՈՒՍՈՒՄ / 1
ՄՈՒՏԲ № 53
ԱՄՍԱԹԻՎ 23 / 03 2020



«Հաստատում եմ»
Արտադրատեխնիկական բաժնի պետ՝
Ա. Մարտիրոսյան
« 14 » 03 2020թ.

Տեխնիկական պայման ԱՐ 1135 /2020/
(Ջրամիացման և կամ/ ջրահեռացման մախագծման)

ք. Երևան՝ Նոր-Նորր Բազրկանդի փողոց 74
Հայաստանի Հանրապետություն
011219787



183580

4.2. Գազամատակարարման տեխնիկական պայման



Գ Ա Ջ Ա Մ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ր Մ Ա Ն
Տ Ե Ն Ա Ի Կ Ա Կ Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե ր
(գազափոխադրման ցանցից)

թիվ. 132

28.12.2020թ.

Պատվիրատու՝ ՀՀ Երևանի քաղաքապետարան (կառուցապատող՝ «ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՎՈՒՐԱՑՈՂ» հիմնադրամ)

(կազմակերպության անվանումը, ֆիզիկական անձի Ա.Ա.Հ)

Տեխնիկական պայմանների տրամադրման հիմքերը - Պատվիրատուի դիմումը: 18.12.2020թ. № 50/2-96406 («Գազալարմ Արմենիա» ՓԲԸ 24.12.2020թ. № Ն/53/4002-2020)

(դիմումի գրանցման № և ամսաթիվը)

Շինարարության տեղը և հասցեն՝ ՀՀ Երևան Լոր-Նորք վարչական շրջան, Բագրևանդ փողոց թիվ 74:

Բնական գազի սպառման պահանջվող ծավալները 0,35 հազ. մ³/ժամ (առավելագույն ժամային ծախսը)

Գազամատակարարման համար պահանջվող գազի ճնշումը 0,3 (3) ՄՊա (կգուծ/սմ²) (գազի առավելագույն ճնշումը)

Միացման կետում գործող գազատարի (կամ ԳԲԿ-ի) անվանումը՝ Ջրվեժ ԳԲԿ-ն սնող D_ա-300մմ տրամագծով կողմնատար- գազատար:

(նպղծության գազատար, կողմնատար-գազատար, ԳԲԿ, այլ կողմակերպությունների պատկանող գազատարներ, ԳԲԿ-ներ)

Օբյեկտի շինարարության պլանավորված ժամանակահատվածը՝ սկիզբը - ավարտը -

Գազափոխադրման ցանցին միանալու տեխնիկական պայմանները

Ներմիացման կետ է հանդիսանում Ջրվեժ ԳԲԿ-ն սնող D_ա-300մմ տրամագծով կողմնատար-գազատարի մոտավորապես 0,05կմ:


(հանգույցի տեխնիկական բնութագրերը)

Գազի ճնշումները ներմիացման կետում:

- նախագծային 5,5 (55) ՄՊա (կգուծ/սմ²),
- փաստացի 1,1-2,5 (11-25) ՄՊա (կգուծ/սմ²)

Ներմիացման կետում խողովակի և մեկուսիչ շերտի տեխնիկական բնութագրերը պողպատե խողովակ D=325x5մմ, մեկուսիչ շերտը՝ ժայռավեղային

Ներմիացման տեղանքային գծապատկերը



Տեխնիկական պահանջներ

1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակել տեխնիկական պայմանների ամբողջական պահանջներով:
2. Տեխնիկական պայմաններից շեղումները համաձայնեցնել «Տրանսգազ» ՄՊԸ-ի հետ:
3. Նախագիծը պետք է համաձայնեցվի շահագործող կազմակերպության հետ:
4. Նախագծի մեջ նախատեսել գազատարի պաշտպանիչ միջոցներ (պահով և ակտիվ պաշտպանության) նշելով մեկուսիչ նյութերի տեսակները և օգտագործվող նյութեր-սարքավորումների սերտիֆիկատները:
5. Կատարել գազատարի (ԳԲԿ-ի) կապակցումը տեղանքի հետ:
6. Նախատեսել միայն գործարանային արտադրության ժամանակակից սարքավորումներ:
7. Նախագիծը համաձայնեցնել պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնի և անհրաժեշտության դեպքում այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:
8. Նախագծերին տալ էությունիկական ձևավորում:
9. Նախագծային, շինմոնտաժային և կարգաբերման աշխատանքները պետք է կատարվի համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից:
10. Մինչ շինարարությունը սկսելը նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ենթակա են փորձաքննության:
11. Շինարարության ավարտից հետո ՆՏՓ-ի 2 օրինակ հանձնել շահագործող կազմակերպությանը:
12. Գազատարի պահպանման գոտիները հաշվարկել համաձայն ՀՀ Կառավարության 16 հուլիսի 2015թ. թիվ 787-Ն, իսկ նվազագույն հեռավորությունները՝ ՀՀ Կառավարության 08 նոյեմբերի 2007թ. թիվ 1438-Ն որոշումներին:
13. Առևտրային հաշվառքի սարքերը (գազահաշվիչները) պետք է համարված լինեն գազի ճնշման և ջերմաստիճանի էլեկտրոնային ճշտիչով:
14. Հաշվառման հանգույցը նախատեսել առավելագույն և նվազագույն ծախսերի հաշվառման պայմանով:
15. Նախագծով նախատեսված սարք-սարքավորումները պետք է ունենան համապատասխանության սերտիֆիկատ և շահագործման տեխնիկական փաստաթղթեր:

Հատուկ պահանջներ՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակել ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Լրացուցիչ առաջարկություններ

1. Կառուցել համապատասխան հզորության գազաբաշխիչ կայան, ԳԲԿ-ն սնող կողմնատար-գազատար և ինժեներական քաղաքը սնող միջին ճնշման գազատար:

2. Գազատարի տեղադրումը նախատեսել ստորգետնյա (տեղադրման երանակ-ստորգետնյա, վերցնելյա) պողպատե խողովակից, իսկ ավտոմոբիլային, երկաթգծային ճանապարհների և ջրային արգելքների անցումները նախատեսել ստորգետնյա (ստորգետնյա, վերցնելյա) Արհեստական արգելքների անցման մեթոդները նախապես համաձայնեցնել բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:
3. Նախագծով նախատեսել և տեղադրել նոր, ժամանակակից սարքավորումներ, համապատասխան հզորության գործարանային արտադրության գազաբաշխիչ կայան (ԳԲԿ):
4. Գազատարի (ԳԲԿ-ի) տեխնոլոգիական հնարավորություններից էլնելով, այլ սպառիչների միացման թույլտվության իրավասությունը պատկանում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին՝ առանց սեփականատիրոջ համաձայնության:
5. Շինարարության ամբողջ ընթացքում ապահովել Պատվիրատուի կողմից տեխնիկական վերահսկողություն կամ կնքել պայմանագիր այլ կազմակերպությունների հետ այն իրականացնելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում նախագծային կազմակերպության միջոցով ապահովել հեղինակային հսկողություն:
6. Գազատարի հետ արհեստական արգելքների և ինժեներական հաղորդակցուղիների հատման տեղերում, ինչպես նաև անցումը նրանց պահպանման գոտիներով, անհրաժեշտ է ստանալ տեխնիկական պայմաններ այն շահագործող կազմակերպությունների կողմից:
7. Կառուցապատման ոլորտում իրավասու մարմնի լիազորություններով պայմանավորված ճարտարապետահատակագծային առաջադրանքը ձևավորել տեղադրարային առումով նույն ուղղությամբ տեղաբաշխված կառուցապատողների կողմից նախատեսվող գազաֆիկացման աշխատանքների համակարգմամբ, որի դեպքում քաղաքաշինական և տեխնիկական պահանջների ընդհանուր լուծմամբ կապահովվի գազաբաշխիչ կայանի ընտրությունը և մեկ ուղեգծով գազատարի կառուցումը համաֆինանսավորման սկզբունքով:

Տեխնիկական պայմանների գործողության ժամկետը՝ մինչև 28.12.2021թ.

Տեխնիկական պայմանները կազմեց՝


«Տրանսգազ» ՄՊԸ ԳՀՇ և Ս բաժնի գլխ. մասնագետ Ա.Գրիգորյան Ա.Գրիգորյան

Համաձայնեցված է՝


«Տրանսգազ» ՄՊԸ ԳՀՇ և Ս բաժնի պետ Ս.Քոչարյան Ս.Քոչարյան

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԻՆՃԵՆԵՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ


5.1. Ինժեներական ենթակառուցվածքների համակցված հետազիծը և էլքերի հանգույցների սխեման




5.2. Փողոցների և մայրերի գլխավոր հատակագիծ




5.3. Տրանսպորտի շարժման և ճանապարհների կախավորման սխեմա




5.4. Ճանապարհների հիմնանիշերը և հենապատերի դասավորվածությունը



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԽԵՄԱ





ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ)

Աղյուսակ 1: Մեղմացնող միջոցառումներ					
Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Միջոցառման իրականացման պատասխանատու մարմին	Մոնիտորինգի պատասխանատու մարմին	Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է ծրագրի արժեքի մոտ 1.2-1.5%
ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ					
1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և դրական եզրակացության ձեռքբերում	Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (հուլիս 2014 թ.), ըստ ազդեցության նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես «Գ» կատեգորիա:	1.1. Մշակվել և ՇՄՆ է ներկայացվելու ՆԳՀ հաշվետվությունը՝ բնապահպանական պետական փորձաքննություն և փորձագիտական եզրակացություն ձեռք բերելու նպատակով:	ՀԳՇՆ	«Ձեռնարկությունների ինկուբատոր»	
2. Հանրային քննարկումներ, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են Ծրագրի ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	2.1. Ինժեներական ենթակառուցվածքների կառուցման նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ հանրային քննարկումը իրականացվել է 2021 թ. ապրիլի 20-ին՝ ժամը 11:00-ին: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021թ. ապրիլի 7-ի համարում:	ՀԳՇՆ, «Ձեռնարկությունների ինկուբատոր», Երևանի քաղաքապետարան	«Ձեռնարկությունների ինկուբատոր»	
3. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	ԲԿՊ-ի պահանջները անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ ինժեներական քաղաքի շինարարության և շահագործման փուլերում:	3.1. Աշխատանքային նախագիծը մշակվել է հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:	ՀԳՇՆ, «Ձեռնարկությունների ինկուբատոր»,	«Ձեռնարկությունների ինկուբատոր»	
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ					
1. Առողջության և աշխատանքային անվտանգության պլան					
4. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲԿՊ-ի և ինժեներական քաղաքի կառուցման ծրագրի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: Շինհրապարակի մերձակայքում բնակվող և շինարարական հրապարակում աշխատող մարդկանց ցանկացած հիվանդությունը, վնասվածքը կամ մահը	4.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: 4.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, պատասխաններ և	Կապալառու	«Ձեռնարկությունների ինկուբատոր», ՏՎԽ	

<p>վտանգավոր նյութերի, շին առարկաների ոչ ճիշտ դասավորման և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպման պատճառով անընդունելի է և կպահանջի համապատասխան պատժամիջոցների կիրառում:</p>		<p>այլն:</p> <p>4.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը, մասնավորապես չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում:</p> <p>4.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:</p> <p>4.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</p> <p>4.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ միջոցներով (սաղավարտ, շնչառական դիմակ, պաշտպանիչ ակնոց և ականջակալ, և անվտանգության գոտի), ինչպես նաև անհրաժեշտ է նախատեսել լծակներ դրանց կիրառումն ապահովելու համար:</p> <p>4.7. Բարձրության (1.5մ և ավելի) վրա աշխատանքներում իրականացնել անվտանգության միջոցառումներ, մասնավորապես անվտանգության ձողեր, տեսանելիության ժապավեններ, նշաններ և այլ միջոցառումներ, ինչպես նաև բանվորների տրամադրել անվտանգության գոտիներ:</p> <p>4.8. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և հաշվետվության ձևով ներկայացնել ՀՏՁԶ-ին:</p> <p>4.9. Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Հրահանգավորման վերաբերյալ պետք է պատշաճ գրանցում կատարել գրանցամատյանում:</p> <p>4.10. Խտագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը:</p> <p>4.11. Անհրաժեշտ է նշանակել կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման նպատակով միջոցառումների պատասխանատու (այսուհետ պատասխանատու):</p> <p>4.12. Անհրաժեշտ է շին. հրապարակում պարբերաբար իրականացնել կորոնավիրուսային հիվանդության տարածման և կանխարգելման միջոցառումների վերաբերյալ իրազեկում/դասընթաց:</p> <p>4.13. Անհրաժեշտ է շին. հրապարակում ապահովվել օգտագործված դիմակների և ձեռնոցների համար նախատեսված, ծածկով (կափարիչով) և</p>			
--	--	---	--	--	--

		<p>համապատասխան նշումով աղբամաններ:</p> <p>4.14. Անհրաժեշտ է հրապարակում պահել կորոնավիրուսային հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբի (թույլ իմունային համակարգ ունեցող անձինք, 65 և բարձր տարիք, քրոնիկ հիվանդություններ և այլն) աշխատողների վերաբերյալ գրանցամատյան, որտեղ պետք է կատարել նշումներ ռիսկային խմբի աշխատողների ներգրավածության, բնորոշ սիմպտոմների վերաբերյալ:</p> <p>4.15. Անհրաժեշտ է շին. հրապարակում իրականացնել մաքրության և աշխատանքային տարածքի, մակերեսների և գործիքների ախտահանման պատշաճ գործողություններ:</p> <p>4.16. Անհրաժեշտ է բոլոր աշխատողներին ապահովել պաշտպանիչ դիմակներով, ձեռնոցներով և COVID19-ի այլ անհատական պաշտպանիչ միջոցներով:</p> <p>4.17. Շին. հրապարակում աշխատանքային հանդիպում/քննարկումները, ինչպես նաև դասընթացներն ու այլ քննարկումներն անհրաժեշտ է կատարել բացօթյա տարածքում՝ աշխատողների հիմնական կազմի և/կամ աշխատողների նվազագույն քանակի ներգրավվածությամբ, և պահպանել 1.5-2 մ, սոցիալական հեռավորություն:</p> <p>4.18. Անհրաժեշտ է շին. հրապարակն ապահովել ախտահանիչ (ալկոհոլի հիմքով) հեղուկներով և անձեռոցիկներով:</p> <p>4.19. Անհրաժեշտ է շին. հրապարակում ապահովել ձեռքերի լվացման հնարավորություններ՝ հոսող ջուր, արմնկային կամ ոտնակային (ցանկալի է) կառավարման ծորակներով օճառներ, իսկ դրանց բացակայության/անհնարիության դեպքում՝ անմիջապես ապահովել ախտահանիչ (ալկոհոլի հիմքով) հեղուկով:</p> <p>4.20. Անհրաժեշտ է իրականացնել աշխատողների ջերմաչափում: Յուրաքանչյուր աշխատողի ջերմությունը չափել օրական երկու անգամ, որից մեկը՝ աշխատանքի ներկայանալու պահին և կատարել համապատասխան նշումներ ջերմաչափման գրանցամատյանում:</p> <p>4.21. Անհրաժեշտ է բացառել սուր շնչառական վարակների ախտանշաններով (ջերմություն, հագ, հարբուխ, դժվարաշնչություն) աշխատողների մուտքը շին. հրապարակ:</p> <p>4.22. Շինարարական հրապարակում բոլոր աշխատողներն անհրաժեշտ է պարտադիր կրեն</p>			
--	--	--	--	--	--

		<p>պաշտպանիչ դիմակներ, բացառությամբ ՀՀ առողջապահության նախարարի N 29-Ն հրամանով (11/09/2020թ.) նախատեսված դեպքերի:</p> <p>4.23. Աշխատողների ընդմիջումն անհրաժեշտ է իրականացնել սահմանափակ թվով մարդկանցով նախապես պլանավորված գրաֆիկով / հերթափոխով:</p> <p>4.24. Շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է բացառել անհատական պաշտպանիչ միջոցների համատեղ օգտագործումը կամ փոխանակումը, ինչպես նաև իրականացնել համատեղ օգտագործվող գործիքների ախտահանում մեկ աշխատակցից մյուսին փոխանցելիս:</p>			
2. Հանրության հետ կապերի և իրազեկման պլան					
<p>4. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ</p>	<p>Ազդեցության ենթակա կողմերի և համայնքների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների կամ վրդովմունքի, որի արդյունքում կարող են տեղի ունենալ Ծրագրի ժամկետների հետաձգումներ:</p>	<p>4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախատեսվում է իրականացնել հանդիպում ազդակակիր անձանց հետ և տեղեկացնել ԲԱՄ-ի մասին: Հանդիպման ընթացքում կներկայացվի և կներդրվի ԲԱՄ-ը՝ համաձայն որի.</p> <p>Ա) Շինարարական հրապարակումանհրաժեշտ է հիմնել հիմնական կամ շարժական գրասենյակ:</p> <p>Բ) Անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ/ցուցապաստառներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության գրասենյակի գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց, ինչպես նաև հեռախոսահամարների մասին, էլեկտրոնային հասցեներ, այդ թվում՝ Պատվիրատուի, համապատասխան բաժնի հեռախոսահամարներ, էլեկտրոնային հասցեներ:</p> <p>Գ) Գրասենյակում անհրաժեշտ է պահել բողոքների գրանցամատյան: Բողոքի գրանցման ձևը տես հավելված 9-ում:</p> <p>Դ) Անհրաժեշտ է նշանակել սոցիալական հարցերով զբաղվող պատասխանատու անձ, իսկ 15 օրվա ընթացքում պատասխանել դիմորդին հարցի լուծման վերաբերյալ:</p>	<p>«Ձեռնարկությունների ինկուբատոր», Կապալառու</p>	<p>«Ձեռնարկությունների ինկուբատոր», ՏՎԽ</p>	
3. Շրջակա միջավայրի պահպանության պլան					
<p>5. Նախագծված ինժեներական ենթակառուցվածքների կառուցման և այլ շինարարական աշխատանքներ:</p>	<p>Հարակից տարածքի ազդակիրների, համար գնահատվում են հիմնականում փոշու արտանետումներ. մասնավորապես.</p> <p>- հողային աշխատանքների և ինժեներական ենթակառուցվածքների</p>	<p>5.1. Օդի աղտոտման և փոշու կառավարում</p> <p>5.1.1. Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում:</p> <p>5.1.2. Անհրաժեշտ է իրականացնել կանոնավոր ջրցանում շինարարակից փոշու</p>	<p>«Ձեռնարկությունների ինկուբատոր»</p> <p>Կապալառու</p>	<p>«Ձեռնարկությունների ինկուբատոր», ՏՎԽ</p>	

<p>Հողային աշխատանքներ</p> <p>Շինանյութերի փոխադրումներ</p>	<p>կառուցման, և այլ շին գործողությունների ընթացքում, տրանսպորտային միջոցների երթևեկության, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործման ընթացքում:</p> <p>Շինարարական աշխատանքների ընթացքում գնահատվում է աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:</p>	<p>արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով:</p> <p>5.1.3. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար:</p> <p>5.1.4. Մեքենաների երթևեկությունն անհրաժեշտ է իրականացնել սահմանափակ 30կմ/ժ չգերազանցող արագությամբ՝ երթևեկությունից առաջացող արտանետումները կրճատելու համար:</p> <p>5.2. Աղմուկի և թրթռումների կառավարում</p> <p>5.2.1. Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:</p> <p>5.2.2. Անհրաժեշտ է խուսափել մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են՝ մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, հասարակական շենքերը և այլն:</p> <p>5.2.3. Աղմուկ առաջացնող աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել օրվա ցերեկային ժամերին 14:00-18:00:</p> <p>5.2.4. Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով, որոնց սարքին լինելը պետք է ստուգվի յուրաքանչյուր օր՝ աշխատանքները սկսելուց առաջ:</p> <p>5.2.5. Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը, իսկ դրանց կամ խլացուցիչների անսարքիության դեպքում տվյալ մեքենան անհրաժեշտ է դուրս բերել շինհրապարակից:</p> <p>5.2.6. Անհրաժեշտ է խուսափել թրթռումներ առաջացնող աշխատանքներ կատարելուց, իսկ նման աշխատանքների անհրաժեշտության դեպքում՝ դրանք իրականացնել ցերեկային ժամերին՝ խստորեն պահպանելով ՀՀ թույլատրելի նորմերի մակարդակները:</p> <p>5.2.7. Անհրաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան ԱՊՄ-րով, այդ թվում՝ ականջակալներով:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>«Ձեռնարկությունների ինկուբատոր»</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>«Ձեռնարկությունների</p>	
	<p>Հանրային գոտում առկա ծառաթփային բուսականության վրա ազդեցություն:</p>	<p>5.3. Բուսականության պահպանում և կառավարում</p> <p>5.3.1. Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել</p>	<p>Կապալառու</p>	<p>«Ձեռնարկությունների</p>	

		<p>ազդեցության ենթարկված բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով:</p> <p>5.3.2. Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում:</p> <p>5.3.3. Անհրաժեշտ է բացառել տարածքում այն ծառերի և թփերի հատումը, որոնք նախագծի համաձայն ազդեցության չեն ենթարկվում</p>	Կապալառու	ինկուբատոր», ՏՎԽ	
	Ինժեներական քաղաքի տարածքում առկա բուսահողի վրա ազդեցություն:	<p>5.4. Բուսահողի պահպանում և կառավարում</p> <p>5.4.1. Անհրաժեշտ է իրականացնել ազդեցության ենթակա հողաբուսաշերտի մերկացում և ժամանակավոր պահեստավորում/պահպանում հրապարակում դրա համար նախատեսված վայրում՝ հետագայում տարածքի կանաչապատման աշխատանքներում օգտագործելու նպատակով:</p> <p>5.4.2. Հողաբուսաշերտի պահեստավորումը պետք է իրականացնել 2մ չգերազանցող բարձրությամբ կույտերի տեսքով և պաստառներով ծածակված վիճակում:</p> <p>5.4.3. Անհրաժեշտ է շինաշխատանքների ընթացքում հնարավորինս բացառել հողային մակերեսների վրա անուղղակի ազդեցություններն, ինչպիսիք են շինթափոնների տեղադրում, կեղտաջրերի / բետոնաջրերի հեռացում և այլ գործողություններ:</p> <p>5.4.4. Անհրաժեշտ է շինհրապարակում ունենալ կեղտաջրերի հեռացման տարա (≥3 մ³) և հնարավոր կեղտաջրեր/բետոնաջրերը հեռացնել նախատեսված տարայում: Տարայում հետերոգեն մասնիկների նստեցումից հետո պարզված ջուրը օգտագործել շին աշխատանքներում, իսկ հետերոգեն զանգվածը որպես շին աղբի հեռացնել աղբավայր:</p>	Կապալառու	«Ձեռնարկությունների ինկուբատոր», ՏՎԽ	
	Պատահական հայտնաբերված գտածոներ	<p>5.5. Մշակութային ժառանգություն</p> <p>5.5.1. Հողային կամ շին. աշխատանքների ժամանակ հայտնաբերված պատահական գտածոները պետք է գրանցվեն, տեղեկատվությունը պետք է տրամադրվի պատասխանատու մարմիններին, աշխատանքները պետք է հետաձգվեն կամ դրանց կատարման վայրը փոփոխվի՝ գտածոների հետագան պարզելու նպատակով</p>			
4. Ենթակառուցվածքների և այլ ազդակակիր օբյեկտների կառավարման պլան					
6. Ենթակառուցվածքների և այլ ազդակիր օբյեկտների վրա ազդեցություն:	Ինժեներական քաղաքի տարածքի մերձակայքում առկա շինությունների վրա ազդեցություն:	<p>6.1. Անհրաժեշտ է խուսափել շինարարական աշխատանքների ընթացքում տարածքի մերձակայքում առկա շինությունների վրա ֆիզիկական ազդեցություններից, իսկ շինարարության ընթացքում պատճառված վնասները կվերականգնվեն շինարարության կապալառուի կողմից՝ սեփական միջոցներով:</p> <p>6.2. Անհրաժեշտ է խուսափել մերձակայքում առկա կա-</p>	Կապալառու	«Ձեռնարկությունների ինկուբատոր», ՏՎԽ	

		<p>ռույցների մոտ մեքենաների/մեխանիզմների կայանումից և ապահովվել վերջիններիս անխափան շահագործումը:</p> <p>6.3. Հողային աշխատանքների ընթացքում չնախատեսված ենթակառուցվածքների հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է տեղեկացնել Պատվիրատուին:</p>	<p>Կապալառու «Ձեռնարկույթ-յունների ինկուբատոր»</p>		
5. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան					
<p>7. Շին հրապարակի կազմակերպում:</p>	<p>Շինհրապարակի ոչ ճիշտ բխող ազդեցություններ, ազդակիր կառույցների և սպասարկվող անձնակազմի վրա:</p>	<p>7.1. Շին հրապարակը անհրաժեշտ է կազմակերպել բացառապես նախագծվող ինժեներական քաղաքի տարածքում՝ բացառելով այլ ազդակիր տարածքների օգտագործումն առանց համապատասխան թույլտվության:</p> <p>7.2. Անհրաժեշտ է շին հրապարակը կազմակերպել այնպես, որպեսզի ապահովվի կից բնակելի տների անխափան մոտեցումը:</p> <p>7.3. Անհրաժեշտ է կազմել շին հրապարակի կազմակերպման սխեման, որում նշված կլինեն շարժական տնակի տեղադրման, շին նյութերի պահեստավորման, բուսահողի ժամանակավոր պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:</p> <p>7.4. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ժամանակավոր անթափանցելի ցանկապատում, ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:</p> <p>7.5. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց հորերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում և բացառել անիմաստ բաց հորերի առկայությունը շինհրապարակում:</p> <p>7.6. Անհրաժեշտ է իրականացնել բաց հորերի տեսանելի ցանկապատում/նիշահարում՝ նախագուշացնող նշանների պարտադիր տեղադրումով:</p> <p>7.7. Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և կարգավորված: Իրականացնել շինհրապարակի և մոտեցնող ճանապարհների ամենօրյա մաքրում՝ ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>«Ձեռնարկույթ-յունների ինկուբատոր», ՏՎԽ</p>	
6. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան					
<p>8. Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ</p>	<p>Ինժեներական քաղաքի մոտեցման ճանապարհների վիճակը երթևեկության կազմակերպման համար գնահատվում է բավարար:</p> <p>Երթևեկության և մոտեցման ճանապարհների վրա գնահատվում են հետևյալ ազդեցությունները.</p> <ul style="list-style-type: none"> ▪ երթևեկության խափանումներ, ▪ երթևեկության հետ կապված 	<p>8.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով:</p> <p>8.2. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը և մոտեցումն անհրաժեշտ է կազմակերպել շինհրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>«Ձեռնարկույթ-յունների ինկուբատոր», ՏՎԽ</p>	

	<p>վտանգներ և անվտանգության խնդիրներ,</p> <ul style="list-style-type: none"> ▪ փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ, ▪ հանրային ճանապարհների վրա ցեխի և շին. աղբի տարածում, ▪ շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհների հնարավոր վնասներ: 	<p>8.3. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել մոտեցման ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհի նախնական վիճակը:</p> <p>8.4. Հնարավորինս պետք է խուսափել երթևեկել քաղաքային երթևեկության ծանրաբեռնված ժամերին:</p> <p>8.5. Անհրաժեշտության դեպքում ձեռք բերել պետ. մարմիններից շին տրանսպորտային միջոցների երթևեկության ուղիների թույլտվություն</p> <p>8.6. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</p> <p>8.7. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում՝ հրապարակի ներսում:</p> <p>8.8. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:</p> <p>8.9. Անհրաժեշտ է ապահովել փոխադրամիջոցների սարքավորվածությունը աղմուկի կլանիչներով և խլացուցիչներով:</p> <p>8.10. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր գնում վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար:</p> <p>8.11. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով:</p> <p>8.12. Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել անվտանգորեն մաքրելու միջոցներով (աշխատանքային տեղամասում կոպճային մակերևույթների և փոխադրամիջոցների լվացման միջոցներ համապատասխան արտահոսքի կանխման համակարգով) շինարարական աղբն ու ցեխի տարածումը կանխելու համար:</p> <p>8.13. Պարբերաբար պետք է ստուգել հարակից ճանապարհների վիճակը պարզելու համար շինհրապարակից տարածվող ցեխի առկայությունը, իսկ տարածման դեպքում՝ այն մաքրել:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
7. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան					
<p>9. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)</p>	<p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:</p> <p>Աշխատողների մոտ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտանիշների առակայության դեպքեր:</p>	<p>9.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին հրապարակում:</p> <p>9.2. Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը:</p> <p>9.3. Անհրաժեշտ է իրականացնել արտակարգ իրավիճակների արձագանքման քայլերի մասին տեղեկացնող պաստառների տեղադրում:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>«Ձեռնարկությունների ինկուբատոր», ՏԿԽ</p>	

		<p>9.4. Արտահոսքը մաքրող գործիքները պետք է ճիշտ ձևով պահեստավորել, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հեշտությամբ օգտագործվեն, ինչպես նաև աշխատող անձնակազմը պետք է տեղեկացված լինի դրանց ճիշտ գործածության մասին:</p> <p>9.5. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:</p> <p>9.6. Քիմիական և այլ վտանգավոր նյութերն ու վառելանյութը պետք է օգտագործել միայն անհրաժեշտության դեպքում: Դրանք անհրաժեշտ է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում, որն ապահովված է անանցանելի/ անթափանց հատակով (ավազե, բետոնե կամ մետաղական հիմքեր) և պատնեշով:</p> <p>9.7. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:</p> <p>9.8. Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:</p> <p>9.9. Մշտապես իրականացնել շին. հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:</p> <p>9.10. Հրդեհաշիջման համար նախատեսված ջրադրյունների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:</p> <p>9.11. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	---	---	--	--

		<p>աշխատանքների վերականգնում համար:</p> <p>9.12. Արտակարգ պատահարի դեպքում անմիջապես անհրաժեշտ է տեղեկացնել Պատվիրատուին հաշվետվության հատուկ ձևը լրացնելու միջոցով (հավելված 10):</p> <p>9.13. Անհրաժեշտ է անմիջապես տեղեկացնել Պատասխանատուին աշխատողի մոտ թեթև հագի, ջերմության (>37.3°C) բարձրացման կամ ինքնագագաղթության վատթարացման դեպքում:</p> <p>9.14. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ աշխատողի հետ շփում ունեցած անձանց շրջանակը պարզելու, նշված անձանց մեկուսացնելու և այդ մասին ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ (զանգահարելով 8003 համարով):</p> <p>9.15. Անհրաժեշտ է իրականացնել աշխատողի անմիջական աշխատանքային տարածքի կամ շփման մակերեսի, օգտագործած գործիքների և անհատական պաշտպանիչ միջոցների (սաղավարտ, արտահագուստ և այլն) անհապաղ ախտահանման միջոցառումներ՝ հիվանդության ախտորոշման դեպքում:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
8. Թափոնների և նյութերի կառավարման պլան					
<p>10. Շինարարական և շինարարական աշխատանքներ</p>	<p>Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինարարակից իրենցից պոտենցիալ վտանգ են ներկայացնում:</p>	<p>10.1. Հողային հանույթը և այլ շինարարական աղբը տեղադրել բացառապես տեղական իշխանության կողմից հատկացված վայրում:</p> <p>10.2. Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինարարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարական թափոններն ու աղբը՝ փոշին և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար:</p> <p>10.3. Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր:</p> <p>10.4. Շին հրապարակի տարածքի սահմաններում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</p> <p>10.5. Շին հրապարակի տարածքի սահմաններում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</p> <p>10.6. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և աղբի կուտակումը շինարարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև տարածքին կից տեղադրված հասարակական աղբամանների օգտագործումը՝ շին թափոնների հեռացման նպատակով:</p> <p>10.7. Առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը հեռացնել շինարար կապալառուի պահեստամաս՝ այլ աշխատանքներում</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>«Ձեռնարկությունների ինկուբատոր», ՏԿՄ</p>	

		<p>օգտագործելու նպատակով, իսկ գոյացած աղբը տեղափոխել աղբավայր (տես 10.1 ենթակետ):</p> <p>10.8. Անհրաժեշտ է սպառողական հատկությունները կորցրած յուղի թափոնները հավաքել հերմետիկ տարայում, պահել հրապարակում՝ ըստ վերը նկարագրված կարգի, և հետագայում հանձնել լիցենզավորված վերամշակողի:</p>	Կապալառու		
9. Աշխատողների և ղեկավար անձնակազմի դասընթացներ					
11. Աշխատողների և ղեկավար անձնակազմի վերապատրաստում	Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:	<p>11.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն:</p> <p>11.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է նաև իրազեկել աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արարողակարգի մասին:</p> <p>11.3. Բոլոր վարորդներին անհրաժեշտ է իրազեկել ԵԿՊ-ի վերաբերյալ:</p>	«Ձեռնարկութունների ինկուբատոր», Կապալառու	«Ձեռնարկ. ինկուբատոր», «Ձեռնարկ. ինկուբատոր», ՏՎԽ	«Ձեռնարկութունների ինկուբատոր», ՏՎԽ
10. Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան					
12. Շինհրապարակի վերականգնումը	Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շինարարական նյութերը թափոնները և շին պարագաները	<p>12.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութեր, թափոններ, մեքենաներ, սարքավորումներ, ցանկապատում և այլն:</p> <p>12.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները, ապամոնտաժման և վերատեղադրման աշխատանքները:</p> <p>12.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը:</p>	Կապալառու	«Ձեռնարկութունների ինկուբատոր», ՏՎԽ	
ՀԵՏՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ					
13. Թերությունների վերացման աշխատանքներ	Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները	<p>13.1. Անհրաժեշտ է ապահովել բոլոր մակերեսների՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքների վերականգնումը մինչև սկզբնական վիճակ:</p> <p>13.2. Անհրաժեշտ է ապահովել կանաչապատման աշխատանքները՝ համաձայն կանաչապատման նախագծի:</p>	«Ձեռնարկութունների ինկուբատոր» Կապալառու	«Ձեռնարկութունների ինկուբատոր» Կապալառու	
14. Բնապահպանական աուդիտ		14.1. Իրականացնել հետշինարարական բնապահպանական աուդիտ:	Կապալառու	«Ձեռնարկութունների ինկուբատոր»	

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխանատուներ	Մոնիտորինգի հաճախականություն
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ						
1. Աշխատանք ունենալու հնարա- վորություններ	Աշխատուժը համալրված է տեղաբնակներով	Բլոր շին. հրապարակ	Փաստաթղթերի ստուգում այդ թվում՝ կապլառուի կողմից աշխատատեղեր՝ նախատես- ված տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցող- ների և կանանց համար	Կապալառուի կողմից աշխատանքի ընդունված տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց թիվը	«Ձեռնարկութ- յունների ինկուբատոր» ՏՎԽ	Կսահմանվի Կապալա- ռուի կողմից աշխատուժի համալրման պլանի մեջ դիտարկել շինարարական գործողությունների մոբիլիզացման փուլում
2. Հանրային լուսմներ և կապը հանրության հետ	- Հանրության տեղեկացված- ությունը շինարարության փուլերի վերաբերյալ - Ազդակիր կողմերի տեղե-կաց- վածություն Ծրագրի Բողոքների արձագանքման մեխանիզմի վերաբերյալ	Բլոր շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգումներ, - ստուգայցեր շին տեղամասեր, - հանրային լուսմներ, - բողոքների գրանցա-մատյանի ստուգումներ	Բողոքներին արձա- գանքման մեխանիզմ իրականացվել է ԲԳՈԻՇ-ում նկարագրված բոլոր պահանջ-վող ընթացակարգերին համապատասխան	«Ձեռնարկութ- յունների ինկուբատոր»	Հանրային լուսմները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ: ԲԱՄ-ը կանոնավոր ժամանակացույցին համապատասխան:
3. Տարածքի մաքրում քարաբեկորներից	- տարածքի մաքրումը քարաբե- կորներից իրականացված է, - շինհրապարակի մերձակայքի բուսականությունը պաշտպանված է	շին. հրապարակ	- տարածքի քարաբեկորներից մաքրմանը վերաբերվող փաստաթղթերի ստուգում, - շին. հրապարակ ստուգայցեր	Գրանցամատյանում տեղեկատվությունն առկա է	«Ձեռնարկութ- յունների ինկուբատոր»	Կանոնավոր ժամանա- կացույցին համապա- տասխան
4. Շրջակա միջավայրի պահպանություն	- նստվածքների առաջացում, - փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ, - աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	Բլոր շին. հրա- պարակներ, շին. հրապարա- կից 50մ հեռա- վորության վրա գտնվող փոշու, աղմուկի, թրթռումների թրթռումների զգայուն ընկալիչներ	- ակնադիտական ստուգում- ներ՝ շինհրապարակ ստուգ- այցերի միջոցով, - բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում; - փոշու, աղմուկի, թրթռում- ների մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն բողոքների առկայության դեպքում:	- գրանցամատյանում գրանցված բողոքնե-րի քանակն ու կարևորությունը, - փոշու, աղմուկի և թրթռումների մա- կարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում	«Ձեռնարկութ- յունների ինկուբատոր» ՏՎԽ	Կանոնավոր ժամանա- կացույցին համապա- տասխան
5. Շին աղբի և թա- փոնների տեղա-դրման վայրեր	- շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը, հատակագիծը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տե- ղադրման վայրի հարևանությամբ բնակ-չությանը պատճառված անհարմարու- թյուններ:	- փաստաթղթերի ստուգում, - ստուգայցեր շին աղբի և թա- փոնների տեղադրման վայրեր	- Շին աղբի և թափոն-ների տեղադրման վայրը և հա- տակագիծը համապա- տասխանում են պետ. մարմինների կողմից թույլատրվածին և տարած- քի կառավարման պլանին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քա- նակն ու կարևորությունը	«Ձեռնարկութ- յունների ինկուբատոր» ՏՎԽ	Կանոնավոր ժամանա- կացույցին համապա- տասխան

<p>6. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը</p>	<ul style="list-style-type: none"> - երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; - բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը ճանապարհներին և այլ կառույցներին հատկապես ջրահեռացման համակարգերին պատճառվող վնասներ: 	<p>Ճանապարհների օգտագործում, սարքավորումների և նյութերի տեղափոխության համար, շինհրապարակի մոտեցման մուտքերը</p>	<ul style="list-style-type: none"> - փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր 	<ul style="list-style-type: none"> - երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը Պլանի մասնագրերին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը 	<p>«Ձեռնարկութ յունների ինկուբատոր» ՏՎԽ</p>	<p>Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան</p>
<p>7. Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում</p>	<ul style="list-style-type: none"> - վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր 	<p>Բոլոր շին. հրապարակ</p>	<ul style="list-style-type: none"> - փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր 	<ul style="list-style-type: none"> - Պատահարների դեպքում պատահարների հաշվետվության ձևը լրացված է, - պատահարները կառավարվում են արտակարգ իրավիճակների պլանին համապատասխան: 	<p>«Ձեռնարկութ յունների ինկուբատոր» ՏՎԽ</p>	<p>Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան</p>
<p>8. Թափոնների և շին. նյութերի կառավարում</p>	<ul style="list-style-type: none"> - Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում 	<p>Բոլոր շին. հրապարակներ</p>	<ul style="list-style-type: none"> - փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ, հանքեր, թափոնավայրեր կատարած ստուգայցեր 	<ul style="list-style-type: none"> - շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և հրահանգներին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում, - թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է: 	<p>Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան ՏՎԽ</p>	
<p>9. Շինհրապարակի վերականգնում, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների, սանիտարահիգիենիկ կանոնների պահպանում, կանաչապատում և տարածքի բարեկարգում</p>	<ul style="list-style-type: none"> - Աշխատողների սանիտարակենցաղային պայմանները համապատասխանում են ՀՀ գործող նորմերին, - շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված է: 	<p>Տեղամասեր կատարած ստուգայցեր</p>	<ul style="list-style-type: none"> - Աշխատողների սանիտարահիգիենիկ պայմանները համապատասխանում են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին: - Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված մոնիթորինգն իրականացված է համաձայն ՀՀ 	<ul style="list-style-type: none"> - ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից, - թփերի վերատնկման վայրը և քանակը համապատասխանում են նախագծի կանաչապատման պլանին, - ապահովված է թփերի 90% կաչողականությունը: 	<p>«Ձեռնարկութ յունների ինկուբատոր» ՏՎԽ</p>	

			կառավարության 2020թ. հունիսի 2-ի նիստի N 87 արձանագրություն պահանջների: - Շինհրապարակի վերականգնման պլանն առկա է: - Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:			
Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն (Թ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Ց Մ Ա Ն) Փ ՈՒ Լ						
10. Թերությունների վերացման աշխատանքներ	- աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ	Ինժեներական քաղաքի տարածքի սահմաններում	Բողոքներ զգայուն ընկալիչների կողմից	Բողոքների դեպքում՝ աղմուկի և թրթռումների, օդի որակի չափագրումներ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին	«Ձեռնարկությունների ինկուբատոր»	
11. Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Բարեկարգման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Ծառերի, թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	«Ձեռնարկությունների ինկուբատոր»	

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՁԵՎ

Դիմումը ներկայացնելու ամիս/ ամսաթիվը	Դիմողի անուն/ ազգանունը	Դիմողի կարգավիճակը (բնակիչ, ձեռնարկատեր, այլ)	Բողոքի/առաջարկի բովանդակությունը	Դիմողի ստորագրությունը	Դիմումի կարգավիճակը (լուծված/ ընթացքում/ փոխանցված Պատվիրատուին/ չլուծված)

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Պատահարի ամիս/ ամսաթիվը	Պատահարի նկարագրությունը	Պատահարի վերացման միջոցառումները	Միջոցառումների ժամկետները և պատասխանատուն	Պատահարի վերացման կարգավիճակը

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ

Արձանագրություն

**Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Բագրեվանդի փողոցի 74 հասցեում
«Ինժեներական քաղաք»-ի ենթակառուցվածքների իրականացման վերաբերյալ
(1-ին հանրային քննարկումներ)**

ք. Երևան

20.04.2021թ.

2021թ. ապրիլի 20-ին ժ.11:30-ին Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի նստավայրում (հասցե՝ ք. Երևան, Գայի պողոտա 19), տեղի ունեցավ Ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

Հանրային քննարկմանը մասնակցել են Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության, Պատվիրատուի («Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ), նախագծման խորհրդատու («ՀԳՇՆ» ՄՊԸ) ընկերությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցիչներ և բնակիչներ (ընդհանուր՝ 10 մասնակից):

Նախագծի ներկայացում և քննարկում

Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության պետի տեղակալ **Գևորգ Նավասարդյանը** հանդես եկավ բացման խոսքով, ողջունեց հանդիպման մասնակիցներին և ներկայացրեց հանդիպման հիմնական նպատակը: Նա նշեց, որ «Ինժեներական քաղաք»-ի ենթակառուցվածքների կառուցման նախագիծը ենթակա է բնապահպանական փորձաքննության և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այսօր առաջին հանրային քննարկումն է, որի վերաբերյալ հայտարարությունը տեղադրված է եղել նաև Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում:

ՀԳՇՆ ՄՊԸ-ի նախագծող Հակոբ Ուղումյանը ներկայացրեց նախագծային փուլում կատարված աշխատանքները, մանրամասնեց ինժեներական ենթակառուցվածքների տեխնիկական լուծումները՝ համապատասխան գծագրական նյութերով և սխեմաներով: Ինժեներական քաղաքի գլխավոր հատակագծի սխեմայի վրա այդ ամենը նրա կողմից ցույց տրվեցին նաև համապատասխան գծանշումներով:

ՀԳՇՆ ՄՊԸ-ի բնապահպանության մասնագետ Քրիստինե Սահակյանը ներկայացրեց ընդհանուր տեղեկատվություն նախատեսվող գործունեության նախագծային լուծումների և տեխնիկական ցուցանիշների վերաբերյալ՝ ջրամատակարարում, կոյուղի, անձրևաջրերի հեռացում, ոռոգում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, հաղորդակցություն, ճանապարհներ, հեծանվաուղիներ և այլն: Նա ներկայացրեց նաև, որ ինժեներական ենթակառուցվածքներից բացի նախագծով նախատեսված է փակ ավտոկայանատեղի, որի կառուցապատման մակերեսը գերազանցում է 1500 մ²-ը:

Ք. Սահակյանի կողմից կարևորվեց այն հանգամանքը, որ Ինժեներական քաղաքի ողջ տարածքը «Գեոլիք» ՄՊԸ-ի կողմից հետազոտվելուց բացի, ինժեներական ենթակառուցվածքների անցկացման կոնկրետ տեղամասերում մանրամասն ինժեներական կառուցվածքային ուսումնասիրություններ կատարվել է նաև ՀԳՇՆ ՄՊԸ-ի կողմից:

Ք.Սահակյանը նաև նշեց, որ տարածքի էսքիզային գլխավոր հատակագիծը մշակվել է այլ խորհրդատուի՝ «Ստորակետ» ճարտարապետական ստուդիայի կողմից, որը նաև պատասխանատու է տարածքի բարեկարգման և կանաչապատման համար: Ներկա պահին «Ստորակետ» ճարտարապետական ստուդիայի կողմից մշակված կանաչապատման նախագիծը ներկայացված է Երևանի քաղաքապետարան՝ հաստատման նպատակով:

Այնուհետև Ք.Սահակյանը ներկայացրեց նախագծի շրջանակներում իրականացրած բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունների ուղղությամբ իրականացված ուսումնասիրությունները: Նա նշեց, որ բացահայտվել են ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող դրական և բացասական ազդեցությունները և առաջարկվել դրանց ուղղությամբ անհրաժեշտ մեղմացնող միջոցառումները: Նա ներկայացրեց բնապահպանական կառավարման պլանում ամփոփված բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև դրանց մեղմացման ուղղությամբ առաջարկվող միջոցառումները, որոնք ներառում են նաև հնարավոր բողոքների արձագանքմանն ու լուծմանն ուղղված միջոցառումներ:

Նշվեց, որ ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվող աշխատանքները չեն թողնի բացասական ազդեցություն տարածքի շրջակա միջավայրի վրա, քանի որ գործունեությունն իրականացվելու է քաղաքային միջավայրի արդեն ուրբանացված տարածքում:

Որոշակի բացասական ազդեցություններ կանխատեսվում են շինարարության փուլում (օր.՝ փոշի, աղմուկ, շինարարական և կենցաղային աղբ), որոնք սակայն կլինեն սահմանափակ, տեղային, կունենան ժամանակավոր բնույթ և կլինեն կառավարելի:

Մասնակիցների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

N	Հարց	Պատասխան
1.	<p><u>Արտակ Բաբայան, Նոր Նորք վարչական շրջան, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ</u></p> <p>Մտավախություն կա, որ 118 մեքենաների համար նախատեսված միահարկ փակ ավտոկայանատեղին չի կարողանա բավարարել տվյալ տարածքի պահանջները: Արդյո՞ք հնարավոր չէ նախատեսել նաև ստորգետնյա հարկ:</p>	<p><u>Մարինա Մինասյան</u> («Ձեռնարկությունների ինկուբատոր» հինադրամ)</p> <p>Բացի փակ ավտոկայանատեղիից, տարածքում լինելու է նաև բացօդյա ավտոկայանատեղի: Ինչ վերաբերում է ստորգետնյա հարկին, ապա ֆինանսական առումով նրա նախատեսումը նպատակահարմար չի եղել՝ հաշվի առնելով նաև տարածքի գրուտները: Մակայն հետագայում նախատեսվում է ավտոկայանատեղին դարձնել երկհարկանի՝ վրան ավելացնելով երկրորդ հարկը:</p>
2.	<p><u>Արտակ Բաբայան, Նոր Նորք վարչական շրջան, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ</u></p> <p>Արդյո՞ք սովորական բնակիչները հնարավորություն կունենան օգտվել տարածքից և ո՞վ է սպասարկելու տվյալ տարածքի հետագա խնամքը:</p>	<p><u>Մարինա Մինասյան</u> («Ձեռնարկությունների ինկուբատոր» հինադրամ)</p> <p>Տարածքը լինելու է բնակիչների համար բաց, որտեղ նրանք կարող են անցկացնել իրենց հանգիստն ու ժամանցը: Տարածքի հետագա խնամքն ու սպասարկումը կիրականացվի ինժեներական ասոցիացիայի կողմից:</p>

<p>3.</p>	<p><i>Արտակ Բարսյան, Նոր Նորք վարչական շրջան, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ</i></p> <p>Արդյո՞ք նախագծային լուծումներում հաշվի առնված են ապաստարանների հարցը:</p>	<p><i>Քրիստինե Սահակյան (բնապահպան)</i></p> <p>Ինչպես արդեն նշեցի, ՀԳՇՆ ՄՊԸ-ի կողմից իրականացվել է միայն ինժեներական ենթակառուցվածքների նախագիծը՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված նախագծային թույլտվության պահանջների համաձայն: Մյուս կողմից հարկ է նշել, որ ապաստարանների հետ կապված հարցերը դեռևս չեն կարգավորվում ՀՀ շինարարական նորմերով, որոնք ներկա պահին դեռևս մշակման փուլում են (ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի «ՀՀՇՆ31.10 – «Քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ» շինարարական նորմերը հաստատելու մասին» հրամանը» այս պահին դրված է www.e-draft.am կայքում):</p>
<p>4.</p>	<p><i>Գևորգ Նավասարդյան (Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ):</i></p> <p>Որքա՞ն է շինարարության տևողությունը:</p>	<p><i>Քրիստինե Սահակյան (բնապահպան)</i></p> <p>Միայն ինժեներական ենթակառուցվածքների իրականացման համար շինարարության ժամկետը սահմանվել է 10 ամիս ներառյալ նախապատրաստական աշխատանքները: Մնացած մասով ժամկետներ նշել չեմ կարող, քանի որ դրանք այլ խորհրդատուների իրավասության տիրույթում են:</p> <p><i>Ալիսա Սավադյանը հավելեց.</i></p> <p>«Ինժեներական քաղաք»-ը հանդիսանում է «Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածքներ» ծրագրի շրջանակում ֆինանսավորվող 5 նախագծերից մեկը, որի իրականացումը իր հերթին բաժանված է 3 բաղադրիչների՝ գլխավոր հատակագիծ, ինժեներական ենթակառուցվածքներ, շենք-շինություններ: Բոլոր շինարարական աշխատանքների վերահսկողությունն իրականացվելու է ՀԲ-ի առանձին թիմի կողմից: Իրազեկումը պետք է իրականացվի պարբերաբար նաև գործունեության իրականացման բուն տարածքում:</p> <p><i>Գևորգ Նավասարդյան, Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության պետի տեղակալ</i></p> <p>Իհարկե շատ ավելի լավ կլիներ, եթե Ինժեներական քաղաքի նախագծային լուծումները չտարանաջատվեին, ինչը գործընթացը կդարձներ ավելի պարզ: Սակայն սա ևս ընթացակարգ է և ուզում եմ նշել, որ Երևանի քաղաքապետարանն արդեն ստացել է «Ստորակետ» ճարտարապետական</p>

	<p>ստուդիայի կողմից մշակված Բնժեներական քաղաքի կանաչապատման նախագիծը, որի վերաբերյալ մենք տվել ենք որոշակի դիտողություններ: Նախատեսում ենք մոտ ապագայում ստանալ լրամշակված նախագիծը և հույս ունեմ, որ երկրորդ հանրային քննարկման ժամանակ այն արդեն հաստատված կլինի:</p> <p>Ինչ վերաբերում է Նախնական գնահատման հայտին, ապա նրանում ներառել շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացման, շինարարական հրապարակների պարսպապատման պահանջների նկարագրությունը:</p>
--	---

Հանդիպումն ամփոփեց Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը՝ շնորհակալություն հայտնելով հանդիպման բոլոր մասնակիցներին և ևս մեկ անգամ հիշեցնելով, որ դեռևս կլինի երկրորդ հանրային քննարկումը, որի վերաբերյալ պատշաճ կձևանուցվի:

Հանրային քննարկմանը մասնակիցները ևս շնորհակալություն հայտնեցին հանդիպման համար:


Մասնակիցների ցուցակը և հանրային քննարկման տեսաձայնագրությունը ներկայացվում են սույն արձանագրությանը կից:

**Քննարկումների պատասխանատու
և վարող՝**



Գ. Նավասարդյան,
Երևանի քաղաքապետարանի
բնապահպանության վարչության
պետի տեղակալ

Արձանագրող՝



Ք. Սահակյան,
ՀԳՇՆ ՍՊԸ, բնապահպանության
մասնագետ

Ձեռնարկող



Հ. Ուղումյան,
ՀԳՇՆ ՍՊԸ, ինժեներ նախագծող



ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

«_20_» ապրիլ, 2021

Ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների իրականացման նախագծի վերաբերյալ

(1-ին փուլի հանրային քննարկում)

Մասնակիցների ցուցակ

	Անուն, Ազգանուն	Պաշտոն	Հեռախոս	Ստորագրություն
1.	Բիբակյան Լիանա Հայկուհի	ՀԳՇՆ, Բնակարանային	091 529387	<i>[Signature]</i>
2.	Պապյան Եսաթյան Եսաթ	Երևանի թանգարանի Ֆուլի, Վարդ	093543968	<i>[Signature]</i>
3.	Արսենյան Կարապետյան	Զոր. ծառայ. բժշկ.	055-357-859	<i>[Signature]</i>
4.	Չեխուրյան Երվանդյան	ԴՊՄԻ Բնակարանային ԷՏ սպեցիալիստ	091 204215	<i>[Signature]</i>
5.	Քանյան Նարեկ	«ՀԳՇՆ» ՄՊԸ-ի Ծառայող	077 65-09-00	<i>[Signature]</i>
6.	Արսենյան Կարապետյան	Զոր. ծառայ. բժշկ. և կառավար. ծառայող	041 8800 11	<i>[Signature]</i>
7.	Արսենյան Կարապետյան	Զոր. ծառայ. բժշկ. սպորտային կառավար.	094 228 397	<i>[Signature]</i>
8.	Լուսինյան Գեորգյան	ՀՏԲԸԿՄՇԱԿ բաժնի պետի տնօրեն	077 31 8841	<i>[Signature]</i>
9.	Մաթևոսյան Վահագն	«ԶՊՆ» Սպեցիալ Վճարատվող	093085003	<i>[Signature]</i>
10.	Պապյան Եսաթ	Կառավար. ծառայող	096112 000	<i>[Signature]</i>
11.				
12.				
13.				
14.				
15.				